ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

ԿԻՍԱԿՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԷՍԱՖԱԿԱՆ

26Դ ՏԱՐԻ

1896

ԹԻՒ 12 ՅՈՒՆԻՍ. 1896

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

WIEN 62 BELLT 7 FEB 1896

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՀԱԳՈՅԺ ՏԻԿԻՆ ՄԱՐԻ Հ. ՄԱՄՈՒՐԵԱՆ (Ա. Տ.) . . 353
ԱՍՏՂԻ ՄԸ ԽԱՒԱՐՈՒՄԸ (Գրիգոր Զիլինգիրեան) . . 356
ԸՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ 359
ՀՈՌՄ (Ց. Մ. Էսայեան) 361
ՁԱՅՆ (Տօրբ. Փաշաեան) 367
ԳՐԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ (Ապրսամ) 370
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ (Դիտող) . . . 372
ՏԱՐՎԻՆԵԱՆ ԴՊՐՈՒԹԻՒՆ (Ա.) 373
ՄՈՎՍԷՍ ԵՒ ԿԱՐՄԻՐ ՆԵՂՈՍԸ (Ֆ.) 378
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՅՐԵՆԻՔ 380
ՏԵՂԵԿԱԳԻՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ԸՆԿ. 1895 - 1896 . . 381
ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՈԳ. - ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿ. 1895 - 1896 . . 382
ՀԱՅՐԵՆԻՔ ԵՒ ՄԱՍԻՍ 383
ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ 384
ԻՄ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԿԻՆՍ (Ցառելուած Ա., Մ-ՀՅ)

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Թէև խմբագրութիւնս իր ցունվար 15 (Թիւ 2) Ա. Մ-ՀՅ մէջ յայտարարած էր որ իր Կ. Պոլսոյ գործակալութիւնն դադրեցուցած էր Պերպէրեան էֆէնտիի հրաժարմամբ, սակայն Մեծ. Տիգրան էֆ. Ճիվէլէկեանի սիրոյ օժանդակութիւնն ստանձնելու համար՝ խմբագրութիւնս շնորհակալութեամբ ընդունելով՝ այս յայտարարութեամբ կ'ծանուցանէ Կ. Պոլսոյ մերայնոց, որ՝ կրնան նաև դիմել Ճիվէլէկեան Տիգրան էֆէնտիի գրասենեակը, Պոլսոյ-Ալի Ճուրուէ թիւ- 20 և Ա. Մ-ՀՅ բաժանորդ դրուիլ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ.

ՄԵԾ
ԳԵՐԶԱԿԱՏՈՒՆ
ԳԷՈՐԳ Մ. ՔԷՃԻՃԵԱՆ

Ապակեվաճառանոց Նոսոֆեան Ֆերիանէին կից, Թիւ 1

Վաճառատունս հասատատուած օրէն իվեր սուղ ժամանակի մէջ ունեցած բազմաթիւ յաճախորդներս, ապացոյց մի են թէ՝ մենք մեր յայտարարութեան հաւատարիմ գտնուած ենք, հարկ չիկայ գովեստներ շռայլել։ Յայտ, մեր գործերը միայն արդէն՝ թէ դներու ժամանութեան հետ նաև ունինք մեծ առաւելութիւն մը ուրիշ նմանօրինակ հաստատութիւններէ ձևի, կարի և ապրանքի մասին։ Երևակայեցէք թէ՝ որչափ դժուարին է ամեն մէկ անհատի ճաշակը գոհացնել և ձևին յարմարութիւն տալ, նա մանաւանդ երբ այդ անձը առաջին անգամ է որ հագուստ չինել կուտայ մեզ։ Ուստի ինչպէս մինչև այսօր, նոյնպէս ալ այսուհետև պիտի աշխատինք ամեն ջանք և զոհողութիւն չի խնայել նոյն իսկ ամենէ բծախնդիրները անգամ գոհացընել։

Աւելորդ չենք համարիր նաև իմացընել թէ վաճառատանս մէջ կը գտնուի քաղմիրներու, ֆասոնեներու և այլ տեսակ ասուելիններու մոխ հաւաքածոյ մի, և թէ պատրաստ կարուած հագուստներ ալ ունինք։

Աժան, ճեռաւոր եւ տոկուն, դիմեցէք եւ տեսէք։

2—24

ՄԵԾ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Վ. ՍԻՏԻ — V. SIDI

17, Պուլուարտ Իսն, Ֆրանկոյ Բաշ

Զափաւոր դներով ամենաընտիր կազմ Գրքերու, Թերթերու, Տոմարներու եւ եւ եւ։

12—24

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆՔ

ԱՆԿԼՕ-ԻՍԹՐՆ

ՔՕ-ՕՊԵՐԱԹԻՎ ՔՈՄՊԱՆԻ ԼԻՄԻԹՏ

(ANGLO-EASTERN CO-OPERATIVE COMPANY LTD.)

Ընկերութեանս Տեսչութիւնը պատիւ ունի ծանուցանել իր յաճախորդներուն, որ իր ընդարձակ մթերանոցներուն մէջ պիտի գտնեն ինչ որ կ'փափաքին ունենալ, ինչպէս՝

Բրդեղէն, Մետաքսեղէն, Կերպասեղէն, Ճերմակեղէն, Կտաւեղէն կահաւորման, Գոտակներ, Գլխարկներ և Մուճակներ։

Իրեղէնք նորաձևութեան են, ժապաւէններ, Ծաղիկներ, Բանուածներ, ճամբորդութեան համար այլ և այլ առարկաներ,

ՏՆԱԿԱՆ ԻՐԵՂԷՆՔ, Սպակիայ և Բիւրեղայ և այլազան Լամպարներ։ Գունաւոր թուղթ, Լինոլէօն, ամեն տեսակ զորգեր։

ԳՈՀԱՐԵՂԷՆՔ Բարիզեան տպրանքներ և զանազանք կազանդչէքի համար։ Հոտեղէնք, Ձեռնոցներ, և Թղթեղէնք։ Սպիտակ մետաղէ տպրանքներ երաշխաւորեալ Մարէն և Վէպ Լոնտրայի վաճառատանց կողմէ։

ԿԱՌԱՍԻՔ ամեն տեսակ։ Պղնձէ, Հողէ արձաններ են։ Վաճառատունս ունի նաև մասնաւոր ճիւղ մը զգեստեղէնի, կարի, գլխարկի են։

ՈՒՏԵԼԵԱՑ ՃԻՒՂ։ Որու վրայ մասնաւորապէս Ընկերութեանս Տեսչութիւնը ուշադրութիւն կը հրաւիրէ ծախու դրուած ապրանաց ընտիր տեսակին վրայ, ինչպէս Պանիր, ժամպոն, Կարագ, են. որ մաս առ մաս կը բերուին ամեն շաբաթ միշտ թարմ պահելու համար։ Ընկերութիւնս գնորդին ճաշակին

անյարմար գտնուած ապրանքը եթէ կրնայ առնուլ

Յայտարարութեան քարտուղար թարգմանն և արեւելեան լեզուաց բաղմամեայ ուսուցիչ Մեծ. Միհրան Եֆ. Աբիկեանի հեղինակած ու Աղդ. Ազգ. խորհրդէն ու Կրթական նախարարութենէն հաստատուած ու քանիցս կայս. կառավարութենէն բարձր պատուանշաններով դընահատուած հանրածանօթ օգտակար դասագիրքերն ունենալ փափաքողք կրնան դիմել Ա. Մաշ. խմբագրութեան, ի Մամուրեան Տպարանն։

Ինչպէս տեղւոյս նոյնպէս և Թեմերէից վարժարաններու Պատ. Տեսչութիւնք և վարչութիւնք և մասնաւոր անհատք պիտի դտնեն իրենց փափաքած հատորներն և առ դիւրութիւն արժան դատեցինք ստորև հրատարակել Մեծ. Յօրինողին դասագրքերու ցանկն։

Գիտական բառգրքոյկ, Հայերէն, Դաղդերէն ու Տաճկերէն. գին 3 ղրուշ։

Գործնական դասընթացք, Երարերէն լեզուի. գին մէն մի թերթի 1 ղրուշ։

Ընդարձակ բառարան Հայ.-Տաճկ. 12
» » Տաճկ.-Հայ. 10
» տարերք (մեծ) 6
Համառօտ տարերք 2
Մուխթասիկ Յարիք Օսմանի 6
Մուխթասար » » 3
Թամթիզաթի Միւնշէաթի 3
Մուալիմի Ինշա 5
Նուրքար մեջմուասը 4
Զիւպտէի Նահվը Օսմանի 2
Իլավելի կիւլսեթեթ 6
Նգարձակ Թուրքերէն Նամականեր 6
Մուխթասար կիւլսեթեթ 100 փ.
Համառօտ Նամականեր 3
Ճաշակ Օսմ. գրագիտութիւն Հայ. 4
» » » Թուրք. 3
Թիւճմար եաղշիրաղ 3
Առաջնորդ ուղղագրութեան 2
Տանը փոստարան 2, 50
Հիմանչլի միւնթեխապաթի ֆարս.
Ճիրիսեի մեքեսթիպ 100
Ընկպեր թերճեմե 100
Հատընտիր քաղուածք 100
Լեթոյեթք Ատար Ա. մաս 60
» » » բիւրբ 60
» » Բ. մաս 2
Խբսերի կլիֆպտ 4
Գպրութիւն Օսմ. լեզուի 100
Թիւճմար միւնշէաթը 100
Խիւլասայի գավանին Օսմանիյեե 3.
Առաջնորդ Պարսկ. թարգ. 100
Օսմ. քերական 40
Մուալիմը թերճեմե 2
Առաջնորդ ընթերցանութեան 60
Աիթապ Օսմանի 4
Խօսակցութիւն Արարերէն 4
Փերական անպատկեր 30
Լբսիր » 30
Միթեթսէր Միւթավիկ 2
» բնկպեր 3
» մեզրաք 2
Բառարան գործնական 5
» Հայ. — Տաճ. հմտ. 5
» երեքլեզուեան 27 ղրշ.
Սարիք ֆարսի 2 ղրշ.

ԳԱՌՆԻԿ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

Ամեն տեսակ գրեանց և տպագրական արտադրութեանց
Զանազան պատկերներու և այլն և այլն

ԳՈՐԾԱԿԱԼ

«Ազգագրական Հանդէս», «Մուրճ», «Արեւելեան Մամուլ», «Լումայ», «Արամ», «Հանդէս Ամսօրեայ», «Իրաւունք», «Աղբիւր», «Արարատ», «Բազմավէպ», «Հանդէս Գրականական եւ Պատմական», Հորիզօն», «Տարազ»
Եւ այլն առօրեայ և պարբերական հրատարակութեանց

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Հրատարակչական ընկ. Հայոց Թիֆլիզի, և այլն մի քանի ծանօթ Գրատանց և տպարանաց

ՀԱՅԹԱՅԹԻՉ

Հ. Բիբերդի Աշխարհագրական քարտէզներու,
Եւրոպական լեզուաւ ամեն տեսակ գրեանց և հրատարակութեանց
Հաստատեալ 1890 ի Բուլչուք։

Հասցէ-

K. Deukmedjian, ROUSTCHOUK, (Bulgarie)

Իզմիր Մամուրեան Տպարան-Գրատուն։

ՄԵԾ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հայոց Դէմ Բաղ

Դ. եւ Լ. ՃԷՐԻՏՃԵԱՆ

Պատիւ ունինք ծանուցանել Արդոյ Հասարակութեան և մասնաւորապէս մեր Պատ. Յաճախորդներուն թէ վերջերս մեր վաճառատունը խիստ մոխացուցած ենք զանազան ուտեստներով։

Մեզ դիմողը ամէն ինչ պիտի գտնէ շատ ժամանակներով։

Ունինք նաև Ալփիսարի և ուրիշներու ընտիր օճառներ, նոյն գործատունները ծախուած գիներու վրայ ԱՌԱՆՑ ամենամիտոր յաւելագրութիւն մ'ընելու։

Դիւրութեան համար մեր Յաճախորդներուն հաշուեսեարներ կը յանձնենք և մեր սովորութեան համեմատ հաշիւները ամիսը անգամ մը կը փակենք։

ԱՆՀԱՄԵՄԱՏ ԱՅԺՈՒԹԻՒՆ 12—24

Թիւ 12 15 ՅՈՒՆԻՍ 1896

ՄԱՀԱԳՈՅԺ

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ Հ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Ամսոյս 4 – 5 լուսնակալ գիշերն՝ ժամը 1 ին, Մամուրեան և Ցամկաճեան Ընտանիքներն աղէտալի կորուստ մ'ունեցան՝ յանձին Տիկին Մարի Հրանտ Մամուրեանի, ծնեալ Ցամկաճեան, որ յետ կարճատև հիւանդութեան, իր մահկանացուն կը կնքէր ծադիկ հասակին մէջ, տաբրբինակ զուգադիպութեամբ մը՝ այն գիշերն և այն ժամուն իսկ՝ յորում դեռ տարի մ'առաջ՝ Հիսէնեան առաջատար կը մեռնէր երանոյ թեամբ փոդիսզուն . . . : Մահուան գոյժը կայծակի արագութեամբ կը տարածուէր քաղաքին և արուարձանաց մէջ և ամենուն վրայ

սարսուռազդեցիկ ախուր տպաւորութիւն մը կը թողուր զի հանգուցեալն, ի կենդանութեան, կրցած էր զինքը շրջապատողներու սէրն ու համակրանքը դրաւել ա՛չ միայն իր անոյշ և հեզահամբոյր բնաւորութեամբ, այլ և մեծի և հոգւոյ այն հազուադիւտ բարեմասնութիւններով՝ որք իդեալական սեռին փայլն ու շնորհը կ՚աւելցնեն։ Աշխոյժ, գեղանի, մտացի և ուսեալ՝ Հռիփսիմեան նախկին սանուհին ընտանի վառարանին հոգին և ուրախութիւնը՝ և իր անմխիթար ամուսնոյն միակ յոյսը, սփոփանքն եղած էր։ Այն գրական կեանքին մէջ, զոր կը շնչէին Հայր և Որդիք Մամուրեան, իրա՞ւ ևս ունէր իր եռանդուն մասնակցութիւնը, և այս էջերու մէջ իր դանազան յօդուածներն՝ ինքնագիր կամ թարգմանական, փայլուն ապացոյց մ՚էին թէ անտարբեր չէ՛ր ինք ա՛յն գրական, դիտական, իմաստասիրական և ընկերական շարժմանց՝ որք լուսաւորեալ աշխարհը կը դղրդեն, և թէ՝ կը խոստանար ապագային փայլուն գրիչներէն մին հանդիսանալ։ Ահա այս նկատումներով ընդհանուր եղաւ սուգի և տրտմութեան արտայայտութիւնը։ Տոհմային հաստատութիւնք — Հռիփսիմեան և Մեսրոպեան վարժարանք և Որբանոց — հասարակաց սուգին մասնակցեցան՝ աւելցընելու համար ախուր փայլն յուղարկաւորութեան հանդիսին՝ որ տեղի ունեցաւ չորեքշաբթի ժամը 4ին յետ կիսաւուր, ի տուն հանդիսիս դժբաղդ խմբագրապետին։

Յուղարկաւորաց թափորին, որուն կը նախագահեր Ս. Աւաջնորդ Հայրն քահանայից դասուն հետ, պսակ ի ձեռին առջևէն կ՚երթային Մեսրոպեան վարժարանի բարձրագոյն դասարաններու սանունք՝ ի պատիւ վարժարանաց երբեմնի բաղմարդիւն տեսչին և ականաւոր գրագէտին ու հրապարակագրին։ Անոնց կը հետևէին Հռիփսիմեան սանուհիք՝ ճերմակներ հագած և նոյնպէս պսակ ի ձեռին՝ ի յարգանս հանգուցելոյն, որ երկու տարիէ ի վեր Հռիփսիմեան խնամակալուհի տիկնանց անդամակցութեան պաշտօնը կը վարէր ա՛յնչափ արժանաւորութեամբ։ Անոնց կ՚ընկերանային վարժարանաց ուսուցիչք և մի քանի ուսուցչուհիք՝ իրենց դրոշն ունենալով տեսուչ խաչիկ էֆ. Գազազեան։ Դագաղին կը հետևէր՝ կառք մը համակ ծածկուած այն

պսակներով՝ զորս զրկած էին ազգականներէ և բարեկամներէ՝ Տիկին Իսկուհի Աղազարեան, Տիկին Վարդուհի Պետրոսեան, Այրի Տ. Ս. Տամկաճեան, Զինաւորեան ընտանիք, Տիկին Զարուհի Աստուրօֆ, Օր. Մարի Սիվրիսարեան, Տիկին Նեկտար Սիվրիսարեան, Տէր և Տիկին Դ. Զիլինկիրեան, Յակոբեան Ընտանիք, Տէր և Տիկին Յ. Տ. Դասպարեան, Տէր և Տիկին Միրզա Մսերեան, Տէր և Տիկին Յակոբ Մի.քաէլեան, Տեարք՝ Զարեհ Էրիզլեր, Արամայիս Կոստանեան, Հռիփսիմեան վարժուհիք և սանուհիք, Մեսրոպեան ուսուցիչք և սանունք, Որբանոց Հոդ – Որբախնամ Ընկերութեան։

Այդ ակիրներու խմբին մէջ կ'երևէին բաղմաթիւ ազգականք և բարեկամք և յուղարկաւորաց ընտրեալ բազմութիւն մը։

Յետ եկեղեցական արարողութեան դագաղը դրուեցաւ Ս. Յակոբեանոս եկեղեցւոյ գաւիթը և Հռիփսիմեան սանուհիներէն Օր. Մարի Միրզաեան սրտաշարժ դամբանական մը կարդաց լի երախտագիտական արտայայտութեամբ առ հանգուցեալն, հոգեյոյզ շեշտերով բացատրելով սոյն անդարմանելի կորուստին մեծութիւնը, յիշելով հանգուցեալին գերընտիր ձիրքերը և երկնից մխիթարութիւնը մաղթելով ամուսնոյն, ծնողացն և ազգականաց։ Ապա յուղարկաւորաց կառքերն դիմելով ի գերեզմանատուն, ներկայք ամբոխուր հանդիսատեսներն կ'ըլլային թաղման այն չնաշխարհիկ քնքոյշ էակին՝ որ դեռ երէկ կը փայլէր այնքան կենդանի, գեղով և երիտասարդութեամբ . . . Ու մրմնջելով բանաստեղծին հետ.

Վարդ մ'էր, ապրեցաւ
Վարդերու նման՝
Առատ՝ մը միայն,

արտասուալից և մահ ի սիրտ կը վերադառնային ի տուն, ուր սակայն՝ բան մը կը պակսէր, և այդ՝ տան հոգին էր . . .

Ա. Ֆ.

ԱՍՏՂԻ ՄԸ ԽԱՒԱՐՈՒՄԸ

Et rose, elle a vécu ce que vivent les roses,
l'espace d'un matin. MALHERBE

Ահա նորէն կ'դտնուիմ սև փոսի մ'ասջև և վիզս ծռելով կ'զգամ աչքերուս դառնապէս թրջուիլը։ Իրօ՛ք ոչ ևս է նէ որ սևապէս սպիտակ պատանքի մը մէջ ամփոփուելու, յաւիտենապէս ննջելու և իր սիրելիներուն ժպիտները և ուրախութիւնները, յոյսերը և երազները հետն առնելու անգթութիւնն ունի անպիտակցաբար։ Նէ որ կենդանութեան ժամանակ գթութեան մի հրեշտակը կրնայ անուանուիլ։ Ոչ ևս է նէ որ անողոքելի հիւանդութեան մը մահաբոյր ճիրաններուն մատնուած՝ ամէն մի վեր կ'տառապէր, ապրելու ծարաւէն գրաւուած կ'տանջուէր, և իր ծաղիկ հասակին յատուկ ոյժերովն ու յոյսերովը կը մաքառէր մահուան հետզհետէ ըզգալի ու ահռելի յարձակումներուն դէմ։ Ոչ ևս է նէ որ ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկեան կը նահատակուէր ամենէն նշանաւոր բժիշկներու խնամոց, անձնուէր և երկրպագու երիտասարդի մը, իր յուսաբեկ ամուսնոյն, բոլոր անձկալի ու աղերսալի տքնութեանց, կախարդին ուշադրութեանց ու զոհողութեանց, ընտանեկան գուրգուրալի և անքուն հոգասիրութեանց հակառակ։ Ոչ ևս է նէ որ արթուն ու վառվռուն, սիրուն ու աննկուն երիտասարդի մը, երանութեան ծարաւի Հրանտ Մ. Մամուրեանի կենացը հորիզոնին շքեղափայլ աստղը հանդիսանալէն ետք՝ անհուութեան մէջ կը սուզի, աներևոյթ կ'ըլլայ գարնային երկինքի մը փայլն ու պայծառութիւնը կազմող գիսաւորի մը պէս։ Ո՜հ, ոչ ևս է Մարի Է. Մամուրեան, այդ աղնիւ, ծաղկահասակ, խելանի ու զեղանի կինը։

Նէ՛ որ ութ տարիէ ի վեր սիրելի Հրանտ Մ. Մամուրեանի հոգւոյն բարձանցը վրայ տիրած անարատ սիրոյ մը խորանին աստուածուհին էր, նէ որ Լուկրէսի յատուկ ակնարկովը սըրբութեան սահմանը անցնելու փորձող ամենափոքր կասկածութիւնն զսպելու և իր մի ժպիտովն իր սիրականին երկարատև համբերութիւնները և յոյսերը վարձատրելու կարող թագուհի մ'էր, այսօր անակնկալին, տղետալիին, անդառնալիին, յաւիտենականին հետ՝ կարծես կ'համաձայնի և զինք հոգւոյն սիրողներուն երանութեան դէմ ակամայ կը գաւադրէ զերմարդկային մի հրամանի, այլանդակ ճակատագրին մի կամքին ներքև պրկուելով, և ահա իր սիրական Հրանտին, և ահա

իր պատկառելի հօր, և ահա իր ամեն պաշտողներուն ու սի-
րողներուն առջև կը թողու դատարկութիւն մի, որու տեղը լե-
ցնել երաղելն իսկ ոմիր մ'է, կը թողու իր ետև վիհ մ'որու
տարածութեան, խորութեան և սեւութեան վրայ խորհելով
անզուսպ սարսուռով մը համակուիս կդդամ և կ'ափսոսամ
ունայնարար։ Այո՛, կը թողու այդ հրեշտակը դոգոես չատ
տարիներէ ի վեր տեսնուած երաղներու, տածուած տեսիլնե-
րու, յոյսերու, իղձերու աւերակաց ողբալի կոյտ մ'որուն
վրայ կքուած կ'արտասուէ թշուառն Հրանտ, մեր ամենուն
սիրելին։ Իր քունարեկ աչերը վարագուրող արտասուաց ան-
թափանց հեղեղին մէջէն արձակած մոլորագին նայուածք,
կը յառի սեւաթոյր դագաղի մը վրայ, ծաղկեայ պսակներու
և աղուտապէս վառող մոմերու վրայ, կրկէ մահուան ազօթից
տրտմագին մրմունջը և սև հագը պաշտելի կաթի մը դիակին
վրայ արձակող բահերու չչուկը, վշտաբեկ կը սարսռի, իբր
կայծակնահար կը ծնրադրէ նէրսա յաւիտենական անկողնին
վրայ և դայն վերջին հափշտակով մը, տարամութեան և ապերա-
նութեան յետին մի աղաղակովն ընդ միշտ նուիրագործելէն
ետք՝ կանգ կ'առնու։ Ցամրագէս կը չարժին իր շուրթերը —
անշուշտ աղօթելու համար, և որո՞ւ արդեօք . . . ։ Դե՜ռ կը
շարունակուի այս շարժումը շրթերուն՝ որք չկրնալով գէթ
մանրերկրորդ մ'ունենալ Ս. Ղազարու գերեզմանին վրայ մա-
հուան դէմ դուռացող երկնային ձայնին իշխանութիւնը, յան-
կարծ կը դադրին աղօթելէ, և ահա կը լսուի փսփսուք մը,
հծծիւն մը, որ կը նմանի անէծքի. անէ՛ծք մարդկային իշխա-
նութեան սահմանաւորութեան դէմ, անէ՛ծք բուժական դի-
տութեան տմարութեան դէմ, անէ՛ծք աղօթասուն շրթերու
անբաւականութեան դէմ, և ահա յետին նայուածք մ'ալ
դէպ երկինք անյուսորէն արձակելէն ետք՝ Հրանտ Մ. Մա-
մուրեան վերստին կը կրի կորաքամակ և երեսը կը ծածկէ
ձեռներովը . . . ։ Իրեն հետ Աղնիւ Մարիի գերեզմանին վը-
րայ կ'ողբան ազգական, բարեկամ և ամեն ցաւակից՝ յուզար
կաւոր, և ինձ ևս անկարելի կ'թուի փիլիսոփայական խորհր-
դածութեանց տպաւորիչ՝ վշտոս ու վշտակցութեան սասա-
կութիւնը մեղմելու համար։

Իրաւի՝ Մարի Հ. Մամուրեան, դուստր Տիար Խ. Տամկա-
ճեանի, մօտէն տեսնել ճանչելն ու դինք զմայլմամբ չյարգելու
չսիրելն անկարելի էր։ Իր անտիպական հասակովը, դրաւիչ խել-
քովը ու գեղջկը Իզմիրի հայ տիկնանց դասը փառաւորող հա-
զուագիւտ անձերէն մին էր։ Մեծանուն Մատթէոս Մամուր-
եանի ձեռնասուն աշակերտուհին, Ս. Հռիփսիմեան վարժա-
րանի յառաջդիմութեան յաղթանակներուն, ինչպէս նաև իր

ընտիր յօդուածներովն ու թարգմանութիւններով՝ զոր Իրմանունով կը ստորագրէր, հայ գրականութեան շահատակներէն մին էր։ Մարի Հ. Մամուրեանի սուր մտքին ու բարձր սրտին ձիրքը նախանձելի էին։ Իր ամեն խօսքերուն, ամեն դիտողութիւններուն մէջ լրջմտութիւն, իր վարմունքին և շարժումներուն մէջ հրապուրելի պարկեշտութիւն մը կը փայլէին։ Տարիէ մ'ի վեր միայն ամուսնացած էր, և նէ որ անբաւ արիփով մը կը պաշտէր իր հէք ամուսինը տակաւին անթիական պատանուհւոյ մը յատուկ համեստութեամբ կը շիկնէր երբ պատահմամբ կամ անզգուշարար իր առջև ակնարկութիւն մ'ուղղուէր իր սիրային ու ամուսնական կեանցվրայ։ Լացողներու համար միշտ մխիթարական խօսք մը, վշտակիր դէմքերու դէմ ժպիտ մը, նորեկ այցելուներու համար համակրելի և խնդագին երես մը, յանիրաւի վիճաբանողներու բերանը կարկելու համար պատրաստաբան պատասխան մը, խոչ ակումբի մը խօսակցութիւնն արծարծելու համար սրամիտ շեշտ մը, վանկ մ'ունէր միշտ։ Կ'ապրէր նէ գինք սիրող ազգականներու, բարեկամներու, ծանօթներու ընկերութեան մէջ՝ ճիշտ այնպէս ինչպէս մանիլան իր տերևներուն ներքև։ Պարզասիրութեան, խոնարհամտութեան ու առաքինութեան մի տի գարն էր նէ։ Հայերէն, Ֆրանսերէն և անգլիարէն լեզուներու մէջ ունեցած հմտութեամբը և ըստացած այլ ուսումներովը, նամանաւանդ իր բնաւորութիւնը կազմող զգացումներուն և գաղափարներուն վսեմութեամբը դիւթական ներգործութիւն մը կ'ունենար իր խօսիլը, ճաւոզելը, խնդալը վայելողներուն վրայ, և այս ամենն այսօր յաւիտենապէս կ'ամփոփուի չորս կտոր փայտի մէջ և ափ մը հողի ներքև, և ահա Մամուրեանի, Տամիանեանի, Սիվրիսարեանի, Աղնաւորեանի, Տիլպէրեանի, Զիլինկիրեանի ընտանիքներն այդ լալով կ'ուխտեն մշտապէս հաւատարիմ մնալ սիրելի աներևոյթացեալին յիշատակին, որուն ես ևս անկեղծ վշտի և խորին արտմութեան մահարձան մը կը կանգնեմ մասնաւորապէս սրտիս մէջ՝ ուխտելով ստէպ անոր առջև մարդկային կեանքի դիւրաբեկութեան վրայ մելամաղձօրէն խոկալ և ներքև յիշատակը սիրելի բնաւ չը զգրիլ . . . ։

5 Յունիս, ԳԱՐԵԳԻՆ ՉԻԼԻՆԳԻՐԵԱՆ

Խմբագրութիւնս ջերմագին զգացմամբ իր շնորհակալութիւնը կ'ուղղէ ամեն անոնց որ թէ բերանացի և թէ գրաւոր կերպով իրենց վշտակցութիւնը յայտնելու փութացին սիրական էակի մը տարաժամ մահուան վրայ։ Եթէ համակրական ցոյցեր խոր և անպարմանելի վշտի մը ըստփոփում բերելու բնութիւնն ունենային, անտարակոյս այդ ցոյցեր վշտաբեկ սրտերու մորմոքը պիտի ամոքէին . . . ։

Շնորհակալութեամբ ստացանք մեր Ազնիւ բարեկամ Պ. Մեսրոպ Նուպարեանէ, այս սդալի պարագայիս առթիւ, յօդուած մը որ յաջորդ թիւով պիտի հրատարակուի։

Ա.

ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ*

* * *

Հանգրուանը նաև զօրաւոր միջոց մ'է մոլարն ուղղութեան բերելու։ Այդ զգացման շնորհիւ աղէտ մը հանրային կերպարան մը կ'ստանայ՝ բաժնելով զայն ամենուն մէջ, արտասուքն իրարու կ'խառնէ և այսպէս դժբաղդութիւնը սրտակցութեան գործի մը կ'դառնայ։ Այս բաւական չէ համակրական զգացումով յուսահատութեան դառնութիւնը կ'ամոքի և մեղմաղձութեան կ'վերածուի, որ, ըստ կարգի, փոխադարձ սիրով և սրտի զեղմամբ՝ մխիթարութեամբ կ'համակուի։ Սիրականներու մէջ աղէտ մ'երբէք ծանր երևոյթ մը չառնուր, չկայ բան մ'որ այլասիրութեան բարիքն աւելի զգալի ընէ որքան համակրելի անձի մը սիրտ բանալու անուշութիւնը, անոր աչքերն արտասուքով լեցուիլ տեսնելն և անոր ձեռաց ջերմագին սեղմումն զգալը։ Այն անձն որ անպարբեր կ'անցնէ խորունկ վշտի մը տակէն արժանի է մենատրուանի դէջ լալ՝ իր յուսահատութեան ժամուն։ Տրտմութենէ թող ոչ ոք հեռանայ և ոչ ֆիզիքական ու բարոյական վիրքերէ խոյս տայ։ Այլ ամեն ոք պարտի սրտի վիշտերու վրայ սպեղանին դնել, և այս պայմանաւ միայն մարդ արժանի կ'սեպուի ու-

* Տես՝ Ա. Մ-ի, թիւ 10։

րիչին ուրախութեան մասնակից լինելու։ Այնքան ազդեցիկ է ընկերային յարաբերութեանց ներգործութիւնն որ հանրային դատնալով հաճոյքն և ուրախութիւնն նոր ոյժ մը կ'ստանան։ Փոխանակութեամբ է որ գաղափարներն ու զգացումները թափանցիկ հրապոյր մը կ'ստանան, գործակցութեամբ է որ աշխատութիւնը կ'թեթևնայ, կ'արդիւնաւորի ու կ'հրապուրէ, մի շատ կոչնականներու մէջ միայն ընտիր կերակուր մը կամ կենսատու ըմպելի մ'իր բոլոր արժէքը կ'ընդունի։ Սրտակից ու սիրակից անձերու մէջ միայն զուարթութիւն կ'ծագի, ամենէ սիրալիր զգացումն, վասն զի ամեն զոհողութեան շնորհ մը կ'ընծայէ, ժպիտի մը ներքև արտասուքը կ'ծածկէ, բարեգործութիւնն զբօսանքի կարգը կ'անցնէ։ Թոշ մկրի քաշուին մը-տայոյզ, տխուր ու թախծագէմ բնաւորութիւնները, որ առաքինութիւնն անախորժ ցոյց տալով՝ միայն վհատութիւն ու ձանձրոյթ կ'բերեն։ Հնոի մեղմէ այն դժնեայութիւնն որ սուտ վարմունք մ'է, ատէպ կեղծաւորութիւն մ'է բարեգործութեան մէջ։ Բարիք գործելն այնքան տաժանելի չէ որ իր հետն նեղութիւն ու տառապանք բերէ։

Զուարթութիւնն հոգւոյ առողջութեան նշանն է։ մարդկային յարաբերութեանց երջանկութեան նշոյլ մը տալով, բնաւորութեանց խստութիւններն ամոքելով, պառակտում ու վիրաւորանք արդիլելով՝ զուարթութիւնը ներոգամտութեան կը տանի մեզ։ Այն անձերն որ կենաց թեթև ձախորդութեանց վրայ ծիծաղիլ գիտեն, յոժարամիտ կ'ներեն ուրիշին թերութեանց, և որովհետև ամեն արտասուքի բաներու թշնամի են, կ'ջանան կռիւները հանդարտել, պակասութիւններ սքօղել, անխոհեմութեանց դարման բերել և համաձայնութիւն հաստատել։ Սակայն կարելի չէ իբրև անկեղծ նկատել այն զուարթութիւնն որ կ'շարախօսէ, կ'հեգնէ ու կ'ծաղկէ, վասն զի որքան ծիծաղ նոյնքան ցաւ կ'պատճառէ։ Անարժան ծաղրանքը հակընկերային արարած մը կ'դառնայ, ներոգամտութեան ամեն զգացումէ զուրկ, և վերջապէս արանեղութեան ու չարակամութեան գործիք մը կ'լինի։ Զարութեան դէմ ծաղրը նոյնպէս ճամարտակութիւնը մարդինը զգաստութեան չեն յորդորեր, և այն որ քարոզութեան այս միջոցները կ'գործածէ անաարակոյս անապատի մէջ կ'քարոզէ։ Սակայն բոլորովին տարբեր ներգործութիւն կ'ունենայ այն անձն որ իր կշտամբանքն զուարթաբանութեամբ ու բարեսիրութեամբ կ'համեմէ։ Մարդ յոժարա-

միտ կ'հատայ սիրալիր խօսքի մը, զուարթութեամբ, անուշութեամբ ու խաղաղասիրութեամբ օժտուած ընտիր բնաւորութիւններն շատ աւելի կ'գրաւեն մեզ։ Կնային կազմութեան մեծագոյն մի հրապոյրն է իր անուշութիւնն։ Այժ մ'է այն որ կ'մաղէ ցասկոտութիւնն, անհամբերութիւնն, կ'մեղմէ բարկութիւնը, ամենէ բուռն բնաւորութիւնները կ'նուաճէ և ամենէ անմիտ արարածները կ'գրգռէ բանականութեան յաղթանակին առջև խոնարհիլ։ Անոնք որ կ'զարմանան՝ տեսնելով առ երևոյթս անզսպելի մարդիկ, մի քանի ամիսուան ընտանեկան կենակցութեամբ զսպուած և կնկան մը տկար ձեռօք առաջնորդուած մարդ մ'որ ամբողջ զօրագունդ մ'իր անունէն կ'դողայ, անտարակոյս զարմանալէ պիտի դադրին երբ մի անգամ ստուգեն թէ ի՞նչեր կրնայ ընել համբերատար ու քաղցր բնաւորութիւն մը։ Այն էակն՝ որ ոչ սխալալութեամբ և ոչ բարկութեամբ կը մնայրի, որ թշնամական ոգիէ ազատ է, որ բռնութեան դէմ լոկ արտասուք մ'ունի, և որ սոյն արտասուքի ներքև ժպիտ մը կը շողացնէ՝ զսպանակի նման տաճգական ու ամրապինդ զօրութիւն մ'ունի։ Այլասիրական ամեն զօրութիւններն կ'նպաստեն իր նպատակին։ Առանց փոխարինելու ընդունած նախատինքը նոյնքան հատուցանելի պարտքեր են։ Եւ պիտի հատուցուին՝ երբ հանդարտութեան ժամը հասնի, և այն ընտրեն որով ներում պիտի տրուի սրտի մի արժանիքը պիտի նկատուի, որու հրապոյրը միայն անբաններն չեն կրնար ըմբռնել։

ՀՌՈՄ

Զօլայի այս գործին՝ (*) հրատարակութիւնը նոր աւարտեցաւ Փարիզի ամենէ նշանաւոր գրական թերթերէ միոյն «Լը Ժուռնալ»ի մէջ։ Ինչպէս արդէն յայտնի է ամենուն, հեղինակին «Երեք քաղաքներ» անուն վիպասանութեան երկրորդ մասը կը կազմէ այս։ Այս երեք քաղաքներն են՝ Լուրդ, Հռոմ և Փարիզ։ Լուրդ և Հռոմ հրատարակուեցան և կարելի է «Փարիզ»ալ հաջակաւոր վիպասանին գրչին տակն ելլայ հիմա։ Որովհետ-

(*) «Հռոմ» առանձին հատորով մաս կազմ տպաւ.

ան Զոլայի նախորդ երկասիրութիւնը, այսինքն Լուրդ մեծ ոգմուկ հանեց ոչ թէ միայն Եւրոպիոյ, այլ ամբողջ աշխարհի մէջ, իր պարունակած գաղափարներու, չըսենք նորութեամբ, որովհետև չափազանցած կ'ըլլանք — այլ բանաւոր յեղաշրջող ու դրդիչ հանգամանքով — հակառակ պապական բանադրանքին ու ամենէ սոսկալի — թէև յաճախ շահանդրութեամբ թունաւորուած — քննադատութիւններու։ Քանի մը ծանօթութիւններ հեղինակին այս նոր գործի մասին որ, ինչպէս ըսինք, նախորդին շարունակութիւնը կը կազմէ, կը յուսամ թէ շահեկանութենէ զուրկ չեն երեւիր։ Զոլայի այս նոր գործին հերոսն է Լուրդ նոյն Արբայ Բիէռ Ֆրոմանը, այսինքն ակամայ կրօնական մը, եթէ կարելի է այսպէս անուանել եկեղեցականը որ իւր հաւատքը կորանցուցած է և սակայն չուզեր բաժնուիլ իր կոչէն, երդմնապուծ չլինելու համար։ Զոլայի այս նոր հեղինակութեան ո՛չ վիպական հանգամանքին վրայ պիտի խօսիմ հոս և ո՛չ գրականին։ Որովհետև առաջնոյն համար պէտք եղած ձեռնհասութիւնը չունիմ և գալով վերջնոյն անօգուտ և միանգամայն անհեթեթ կը նկատեմ իմ կողմէս գովեստներ կարդալ հեղինակին գրական յատկութիւններու մասին։ Միմիայն Հռոմ իմաստասիրական կողմին վրայ պիտի խօսիմ այստեղ և ուրիշ ոչ մէկ բանի։ Այս գիրքը որ այնքան մեծ անհամբերութեամբ կըսպասուէր ստուգիւ ժամանակիս ամենէ խոշոր գրականն և իմաստասիրական ճիգն է։ Երբէք նշանաւոր հեղինակին հակայական զօրութիւնը ինքզինքը ցոյց տուած չէ այնքան բարձր որքան այս գործին մէջ։ Սակայն պէտք է շուտով խոստովանիլ թէ, իր այս գործին մէջ, Զոլա չի կրնար երբէք Հռոմը պէտք եղածին պէս խորին կերպով ուսումնասիրած լինելու պահանջկոտութիւնը ունենալ։ Լուրդ կը պարունակէ ուխտաւորի մը տպաւորութիւնը և Հռոմ ճամբորդի մը։ Ճամբորդ մը, որքան ալ սրատես ըլլայ, հարեւանցի կերպով միայն կրնայ դիտել և ուսումնասիրել Հռոմի նման — բաւին բուն նշանակութեամբ — խորհրդաւոր երկիր մը, և ոչ պէտք եղածին պէս խորին կերպով։ Ուստի Զոլայի երկասիրութեան երրորդ մասը, այսինքն Փարիզ է որ պէտք է սպասուի ամենամեծ անհամբերութեամբ ու անոյշով, որովհետև ա՛յն է որ պիտի ըլլայ մանրազնին և ճշմարտապէս խորին ուսումնասիրութիւն, զի Փարիզի մէջ է որ ոնած ու մեծցած է Զոլա։

Բիէռ Ֆրոման գրօսնելու համար եկած չէ Հռոմ, այլ դը-

ծի համար, և շատ կարևոր գործի համար։ Գիրք մը հրատարակած է, նոր Հռոմ անուն, և լսելով թէ Վատիկանի մատենադել ժողովը* սլիտի դատապարտէ զայն ընդհանուր, իրր վնասակար հռոմէական եկեղեցւոյ հաստատութեանց, անմամբ կը գայ կաթոլիկութեան մայրաքաղաքը, իւր այդ գրքին դատը պաշտպանելու համար։

Բիկոի գիրքը երեք մասէ կը բաղկանայ։ անցեալը, ներկան, ապագան։

Անցեալը արտաքոյ կարգի պատմութիւնն է նախնական քրիստոնէութեան և այն յամր բարեշրջման որ այս քրիստոնէութիւնը փոխած է ներկայ կաթոլիկութեան։ Նա ցոյց կը տայ թէ ամեն կրոնական բարեշրջման տակ ծածկուած կայ տնտեսական խնդիր մը և թէ վերջապէս յուիտենական չարիքը, յուիտենական կռիւը միջտ աղքատին և հարստին մէջ եղած է։ Հրէից մէջ, մրոնարնակ կեանքէն անմիջապէս յետոյ, երբ կը տիրեն Քանանացւոց երկրին և կ'ստեղծուի ոտացուածքը դատակարգերու պայքարը կսկսի։ Հարուստներ ու աղքատներ կան և ասկէ կ'ծագի ընկերվարական խնդիրը։ Փոփոխութիւնը յանկարծական կ'ըլլայ, իրաց նոր վիճակը այնքան արագ կը վատթարանայ որ աղքատները յիշելով տակաւին մրանաքնակ կեանքին ոսկեդարը կը տառապին ու կը բողոքեն դատնագին։ Մարդուս ստեղծագործութենէ մինչև Քրիստոս բոլոր մարգարէները ըմբոստներ են, ըմբոստներ՝ որք կը ծնին ժողովուրդներու թշուառութենէն, կ'ոգրան ու կը պատմեն անոնց տառապանքը, և կը հակառակին հարուստներուն, ամեն տեսակ չարիքներ դուշակելով անոնց համար ի պատիժ իրենց անարդարութեան ու խստասրտութեան։ Յիսուս նոյն ինքն այդ ըմբոստներու կարգէն է, որ իրր կենդանի պահապանը կ'երևի նա աղքատներուն իրաւունքին։ Մարգարէները, ընկերվարական ինչ գրութեան որ պատկանէին, քարոզած էին ընկերային հաւասարութիւն, խնդրելով մինչև անգամ աշխարհիս ջնջումն, եթէ արդար չէր այն։ Քրիստոս ևս կը բերէ թշուառներուն, ատելութիւն հարստին դէմ։ Անոր ամբողջ դատաբարակութիւնը սպառնալիք մ'է հարստութեան դէմ, ոտացուածքի դէմ։

Բիկոն կը վերջացնէր իր գրքին առաջին մասը բաղդատելով նախնական քրիստոնէութիւնը արդի կաթոլիկութեան հետ՝ որ

(*) Congrégation de l'Index.

յաղթանակն է հարուստին և զօրաւորին։ Այն հոմէական ընկերութիւնը՝ որը Յիսուս կործանելու եկած էր յանուն աղքատներուն և խոնարհներուն, կաթոլիկ Հռոմը չէ՞ր վերաշինած միթէ։

Եւ ի՞նչ տխուր հեգնութիւն երբ կը հաստատուէր թէ 18 երկար դարերու աւետարանական վերազարթեցումէն վերջ՝ աշխարհս կը փլէր գարմանալի դրամական չոհաղ իրութիւններու մէջ, փտած գանձարաններու մէջ, եկեղեցական աղէտներու մէջ՝ անսահման հարստութեամբ հռչակաւոր մի քանի մարդոց սոսկալի անարդարութեան մէջ — մինչդեռ իրենց բիւրաւոր եղբայրակիցներն սովալուկ կը մեռնէին։ Թշուառներու ամբողջ փրկութիւնը հարկ էր վերաշինե՞լ . . . ։ Բայց այս սոսկալի բաները Բիւրեղ կը պատմէր այնքան ողորմաթիրութեամբ մեղմուցած, այնքան յոյսերով ոգևորուած երեսներու մէջ որ կորսնցուցած էին անոնք իրենց յեղաշրջական վտանգը։ Ասկէ զատ՝ ոչ ուրեք կը յարմակէր քրիստոնէութեան հիմնական սկզբունքին դէմ։ Իր գիրքը առաքելի մ՝աղաղակն էր միայն, իր բանաստեղծութեան զգայուն ձևն՝ ուր կ՝բորբոքէր մերձաւորին միակ սէրը։

Յետոյ կըզար երկրորդ մասը իր հեղինակութեան, ներկան, ուսումնասիրութիւնն արդի կաթոլիկ ընկերութեան։ Հոս, Բիւրեղ աղքատներու թշուառութեան ահռելի պատկեր մը գծած էր, մեծ քաղաքի մը թշուառութեան զոր կը ճանչնար և որու համար իր սիրտը կ՝արիւնէր, որովհետև անոր թունաւորեալ վերքերը անձամբ չոշափած էր։ Անարդարութիւնը անտանելի էր այլ ևս, ողորմաթիրութիւնը անզօր կը դառնար, տագնապանքը այնքան սոսկալի էր որ ամեն յոյս կը մեռնէր ժողովրդեան սրտին մէջ։ Ինչ որ նպաստած էր իր հաւատքը մարելու իր սրտին մէջ, քրիստոնէութեան տարօրէն տեսարաններ չէ՞ր միթէ, որու գեղծմունքը կը ցնորէին դինք ատելութեամբ և վրէժխնդրութեամբ։ Իսկ փտած, փլելու մօտ քաղաքակրթութեան մը այս նկարագրութենէ վերջ՝ կը յիշէր Ֆրանսայի մեծ քաղաքական փոթորիկին պատմութիւնը այն անսահման ակնկալութեան՝ զոր վեհ գաղափարներ սփռած էր աշխարհիս վրայ։ Իշխանութեան գեկը ձեռք առնլով՝ ժողովրդեան պատգամաւորներն ընդհանուր երջանկութեան նոր թուական մը բանալու պաշտօնը ստանձնած էին։ Բայց ամենէ ցաւալին այս է որ դարու մը փորձառութենէ վերջ, ի դերև ելած կ՝երևին ակնկա-

թութիւններն և թշնամիներու նորագոյն երկանկութիւն կատարելի։ Պատրանքը կ'սկսի մանաւանդ գործաւորներու մէջ որ. կը տառապին միշտ։ Ազատ հոչակուելդան, իրաւ, օրինաց հաւասարութիւն շնորհուելդաւ անոնց, բայց այս ամենը անկարևոր ու հեղնական պարգևներ են, որովհետև, ինչպէս երբեմն, այնպէս և հիմա, տնտեսական սարկութեան ներքև նոմուրենէ սպառելու ազատութիւնը միայն կ'ուտանան։ Ամեն ընկերվարական պահանջներ տակէ կ'ծնին, տակէ ծնած է այն ծանր խնդիրը որու լուծումը կը սպառնայ քշել տանել արդի ընկերութիւնը և որ ուրիշ բան չէ այլ աշխատութեան ու դրամագլխի մէջ մղուած պայքարը։ Հանրավարութեան այս մատաւոր ու ճակատագրային գահակալութեամբ մարդկային պատմութեան մի ուրիշ կերպարանքն է որ կը պարզուի, վաղուան ընկերութիւնն է որ կ'ստեղծուի։ Եւ Հռոմի կրօնական իշխանութիւնը չէր կրնար անտարբեր մնալ, պարտաւոր էր մասնակցիլ այս կռուին եթէ չէր ուզեր տնտեսանալ աշխարհիս երեսէն՝ իրր մեքենայ մ'որ իրօք բոլորովին անօգուտ գարձած ըլլար։ Սակայն Բիէռ իր գրքին երկրորդ մասը կը լմեցնէր պատկեր մը գծելով այն մտաւոր ու բարոյական անձկութեան՝ որու մէջ կը տատալտկէր այս գարավերջին։ Եթէ մէկ կողմէ աշխատաւորներու տառապար խումբը կը տառապի, քանի որ արդարութիւն չընդունիր, և կը պահանջէ որ նոր բաժանումի մ'առաջն գոնէ ապահովեն իրեն իր օրական պարէնը, միւս կողմէ կ'երևի թէ ընտրելագոյն դասակարգն ալ աւելի գոհ չէ, քանի որ կը գանգատի այն դատարկութեան մասին ուր կը թողուն զինք իր ողջմտութիւնը և մեծագոյն խմացականութիւնը։ Հոչակաւոր օրենսկութիւնն է այս՝ բնապաշտութեան, դրական փիլիսոփայութեան և նոյն իսկ գիտութեան։ Այն մարդերը՝ զորս կը լսէի բացարձակին պէտքը՝ կը յոգնին գիտութեան խարխափումներէն ու գանգատութիւններէն, գիտութիւն մ'որ միմիայն ապացուցեալ ճշմարտութիւնը կ'ընդունի, գաղանիքի տագնապը անհանգիստ կ'ընէ զիրենք, կատարեալ և անմիջական համադրութիւն մը (synthèse) պէտք է անոնց, հանգիստ ննջելու համար և խորտակուած՝ ծունկի վրայ կ'իյնան ճամբան, խեղք ու միտք կորսնցնելով այն մտածման վրայ թէ՝ երբէք չգիտցի գիտնան ամենը, ու նախագծելով զԱստուած՝ իրրև Անծանօթն։ Դնա այսօր, իրօք, գիտութիւնը չի գոհացներ ոչ մեր արդարութեան ծարաւը, ոչ մեր ապահովութեան փափաքը և ոչ ալ

մեր երջանկութեան գաղափարը, գերեզմանէն անդին, վայելչաներու յաւիտենութեան մը մէջ։ Ոչ, ինչ անուշ բան է մարդուս համար համբուրել իր մեռեալները, ըսել ինքն իրեն թէ պիտի գանէ զայնս վերստին, թէ պիտի ապրի անոնց հետ փառաւոր անմահութիւն մը և գերագոյն արդարութեան մը ստուգութիւնն ունենալով երկրային գոյութեան գարշանքը ատելու համար ու այսպէս սպաննել ոչնչութեան սոսկալի մտածումը, «Ես»ին անհետացման նոսկանքէն ապատիլ և հանդարտիլ վերջապէս այն անխախտ հաւատքին մէջ որ «յետ մահուան» կը թողու ճակատագրական կնճիռներու երջանիկ լուծումը։ Այս երազը՝ ծոլովուրդները դեռ պիտի երազեն երկար ժամանակ։ Այս կերպով կը բացատրուի թէ ի՞նչպէս, այս դարաշրջանս, մտքերու յոգնութեան և նոր աշխարհ մը ծնելու մատեղող մարդկութեան մը խորին վրդովումին պատճառաւ՝ կրօնական զգացումն արմնցած է, անհանգիստ խոչալով և անհուսութեամբ տանջուած, պահանջելով բարոյական օրէնք մը և գերագոյն արդարութեան մ՚ապահովութիւնը։ Կրօնները կրնան անհետանալ, կրօնական զգացումը պիտի ստեղծէ նորեր, մինչև անգամ դիտութեամբ, նոր կրօն մը։ Եւ հին կաթոլիկութիւնը չէ՞ր միթէ որ՝ արդի աշխարհիս մէջ, ուր կ՚երեւէր թէ ամեն ինչ պարտ էր նպաստել այսպիսի հրաշքի մը իրագործման, հին կաթոլիկութիւնը չէ՞ր միթէ որ՝ պիտի վերածնէր, նոր դալար ոստեր արձակելով և բացուելով անմահական խունկ ու բոյրի մէջ, նոր ու անհուն փթթումով մը։

Վերջապէս, իր զրքին երրորդ մասին մէջ Բիլլ նկարագրած էր, առաքեալի մը բոցաշունչ խօսքերով, թէ ինչ պիտի ըլլար ապագան, այս երիտասարդացած կաթոլիկութիւնը որ կը բերէր մահամերձ ազգերու՝ առողջութիւն և խաղաղութիւն, նախնական քրիստոնէութեան մոռցուած սոսկեղարը։ Եւ նախ կը սկսէր գորովալիր ու փառաւոր պատկերով մը Լէոն ԺԳ-ի, իտէալական Պապին, նոխատատմանեալ լակին՝ որ յանձն առած էր ժողովուրդներու փրկութիւնն։ Այսպէս տեսած էր զայն, իր զմայլումին մէջ, փրկարար հովուի մը գալստեան համար իր ըզգացած հրատապ փափաքին մէջ։ Եւ իրօք, կը տեսնենք այսօր այդ Պապը որ, իր տարիքին մէջ հաղուագէպ գործունէութեամբ, կը հաշտեցնէ Սուրբ Աթոռը Գերմանիոյ հետ, կը մերձենայ Ռուսիոյ, կը գոնացնէ Զուիցերիան, կը հայցէ Անգլիոյ քարեկամութիւնը, կը գրէ Զինաց կայսեր խնդրելու համար ան-

կէ որ պաշտպանէ իր կայսրութեան միսիոնարներն ու քրիստոնեաները։ Յետոյ կը միջամտէ Ֆրանսայի մէջ, կը ճանչնայ հանրապետութեան օրինաւորութիւնը։ Իր այս ամեն բրածներուն մէջ մտածում մը կայ սակայն, մտածում մը որ ամենէ մեծ քաղաքական պատկերէ մին պիտի ընէ զինք։ Եւ արդէն պապութեան մտածումն ալ այդ է, այսինքն բոլոր հոգիներու աշխարհակալութիւնը, Հռոմ կեդրոն ու տիրուհի աշխարհիս։ Մէկ կամքը միայն ունի նա, մէկ նպատակ, աշխատիլ եկեղեցւոյ միութեան, իրեն դարձնել այլազանդ հասարակութիւնները, անյաղթելի ընելու համար զայն այն ընկերվարական կռուին մէջ որ կը պատրաստուի։ Ռուսիոյ մէջ կ'աշխատի ճանաչել տալու Վատիկանի բարոյական իշխանութիւնը։ Անգլիոյ մէջ կ'երազէ զինաթափ ընել անգլիական եկեղեցին, տեսակ մը եպրայրական զինադուլ կնքել տալ անոր, և Արևելքի մէջ՝ կը ցանկայ համաձայնութեան մը անջատ եկեղեցիներուն հետ՝ զորս իր բաժանեալ քոյրեր կը նկատէ և որոց վերադարձը կը բաղձայ իր հայրական սիրաը։ Երևակայեցէ՛ք անդամ մը, ի՞նչ ահագին, ի՞նչ յաղթող զօրութեան պիտի հրամայէ Հռոմ այն օրը որ պիտի անվիճելի կերպով իշխէ բովանդակ աշխարհիս քրիստոնէից վրայ։

(Շարունակելի) Գ. Մ. ԷՄԱՐԵԱՆ

ՁԱՅՆ*

ԵՒ ՁԱՅՆՈՎ, ՁԳԱՂՈՂ, ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏՆԵՐ

Երգիչներու, հրապարակախօսներու, քարոզիչներու և այլոց համար առողջապահական խրատներ։

Շնչառութիւն.—Շնչառութիւնը ուսումնասիրելով երգեցողութեան մէջ ունեցած կարևորութիւնը ցուցուցինք։

Ներշնչումը մեզմ և խորունկ ըլլալու է, որով շնչասպառութենէ կազատուի, օդի յորդառատ պաշար մը կը ընդունի, թատերական սոնչ չգոյանար։ Կանոնաւոր և երկարատև շնչառութիւն մը ձայնը դիւրութեամբ շարունակելու կը նպաստէ։

Քանակութիւնը երգի մեթոտին մէջ կը կարդացուի թէ ((խօսելու կամ թոքերուն օդը դարձեալ վերանորոգելու համար երբոր ընդունի, ա-

*Տե՛ս Ա. Մասը, թիւ 3։

առաջին շարժումը ներշնչումն կ'ելլայ։ Այն պահուն փորը կ'ուռի և իր վերին մասը քիչ մը կը յառաջանայ։ ընդհակառակն երգելու համար շնչելու գործողութեան մէջ ներշնչելով փորը տափակել և զայն շուտով բարձրացնել հարկ կ'ելլայ))։

Բրոֆէսէօրներուն մեծագոյն մասին կողմէ ընդունուած այս դրութիւնը խել մը ձայներու կորստեան պատճառ կ'ելլայ։ Արդարև սառծանին ցածնալը առանց արգիլելու փորը ի՞նչպէս տափակելու է։

Այս սխալ գաղափարը ջախջախելէ երբեք պէտք չէ դադրիլ, որ արդէն շատ մեծ դժբաղդութիւններու պատճառ եղած է։ Ինչ երիտասարդ արուեստագէտներ քսնակերմնթուարէ ելլելէ քանի մը տարի վերջը, շնչառական դրութեան այս գէշ վարժութեան հետևանքով թատրոնը ձգել հարկադրուեր են. եթէ երբեք ծանրապէս հիւանդացած չեն, իրենց ձայնը պապաղուն դարձած է։

Լանջը չյոգնեցնելու համար շնչառութեան միակ կերպը որովայնային է և միայն ասոր դիմելու է։

Արուեստագէտը մարմինը ուղիղ բռնելու, ուսերը իջեցնելու և կուրծքը յառաջացնելու է։ Կարդալու կամ երգելու միջոցին բնագիրը տեսողական կէտին՝ գրեթէ կուրծքին վերի մասին բարձրութեան մօտ զետեղելու է, վերջապէս ծռելու չէ։

Որովայնային շնչառութիւն կատարելու համար ստամոքսի խուռոչը պէտք է առաջ ձգել և զայն ուժգին կարկամել։ յետոյ, երբ աշակերտը այս շարժումը սորի, ստամոքսի խուռոչը կարկամելով կարճ արտաշնչումմը և վերջը որովայնը դէպի առաջ մղելով ներշնչումմը կատարելու է։ Ներշնչման և արտաշնչման այս երկու շարժումները բերանը գոց վիճակ, յետոյ լայնապէս բաց բերանով փոխն ի փոխ կատարելու է։

Արտաշնչումը կանոնաւորելու համար, կարելի է արտաշնչման միջոցին բերանի առջև մատ մը դնել, որ պէտք չէ ըոցը երերցնել։

Շնչելու եղանակին վրայ շատ կը պնդենք, որովհետև բազմաթիւ են այն արուեստագէտները որ ձայնին տարբերութիւնը տալու համար իրենց թոքերը գործածել չեն գիտեր։ Գործածելու շնչառական եղանակ մը կը փնտռեն որ ոչ միայն իրենց և հասարակութեան համար գծնդակ է, այլ նաև իրենց ձայնը կը յոգնեցնէ և նոյն իսկ կը մարէ։ Ուստի շնչառութեան պատճառած գէշ ներգործութիւնը չափելու համար բաւական է գիտել խել մը արուեստագէտներ որոնց լանջին վերի մասին տարածման կերպով մը բարձրանալը կը տեսնուի, և որ թատերական սենչ, հեռաք, գլխոյ ու գոգի արձանախծում և հետևաբար բարձր ձայնով երգել կարդալու անկարելիութիւն պատճառել չուշանար։

Կարևոր է՞ նաև շնչառութեան այս եղանակին զգուշանալ որ ցարդ դժբաղդաբար կը գործածեն. պէտք է՞ այս սովորութիւնը ուղղելը դիտնալ որ արուեստագէտին խիստ վնասակար կրնայ ըլլալ։

Այս պակասութիւնը դարմանելու համար Մանալ կը խրատէ ամենուին կռնակին կապնած դիրքի մը մէջ նստելով թեւերը ծալել, ուսերուն շարժումը արդիլելու համար կարելի եղածին չափ բարձր։ Կարելի է նաև թիկնաթոռի մը թիկունքներուն միջև արմունկները քաշ քաշի դնել կամ իր վրայ ծռած թեւերը կուրծքին դէմ հաստատուն կերպիւ սեղմել, արմունկները դէպի ետ բռնելով։

Լանջային մկանուները զօրացնող վարժութիւններն ևս կը յանձնարարուին, ինչպես մարմնամարզ, սրախազ և լող։

Մարդ եթէ իր ձայնին տէր չէրլլայ, եթէ զայն ճապուկ ընել և ուզուած ներդործութիւնը յաւաջ բերելու յարմարեցնել չգիտնայ, ոչ առաւնստագէտ, ոչ հրապարակախօս կրնայ ըլլալ։

Շնչառութիւնը այնպէս մը ընելու է որ հասարակութիւնը չկռահէ թէ անիկա ներշնչում մը առնել բռնադատող միակ պէտքն է։ Առաւնստագէտը նաև պարտի դիտնալ իր թոքերը օդով լեցնել և իր շնչառութիւնը կանոնաւորել, առանց ասոր շունչը կարճ կ'ըլլայ, բայց հակառակ ծայրայեղութեան մէջ իյնալու չէ և երկայն ներշնչելու է։

Խօսուածքն։ — Հրապարակախօսելու համար լաւագոյն ձայնը սովորական խօսուածքն է։ Շատ ցած կամ բարձր խօսուածքն մը ընթերցը վատնդաւոր է, այս կերպով ոչ սաստիկ ձայն մը կ'ստացուի և ոչ ալ ճառում ձայնի մը վրայ կ'ստանդնուի։ Ունկնդիրներու համար այս կերպ ձայնը յոգնեցուցիչ և անյարմար կը դտանայ, իր նախնական յատկութիւնը կը կորսնցնէ և զանազանելը դժուար կ'ըլլայ, հրապարակախօսին ճիգերուն հակառակ տիտիջները անդադար խաբեցնել կը միտի։

Այս պարագային դործածուելիք ձայնը միջնաձայնն է։ սիկա նուազ յոգնեցուցիչ է։ Ձայնը անմիջապէս իջեցնելու համար բարձր ձայնաստիճանի վրայ հրապարակախօսութեան սկսելէ զդուշանալու է, որովհետև խօսքերուն վերջիերը անորոշ կ'ըլլան։

Ձայնը չափաւորութեան մէջ բռնելու է։ «Ձայնի միջին աստիճանները, կ'ըսէ Քլնտիլիէն, նախընտրելի են, ի հարկին զանոնք ոգևորելու կամ մեղմացնելու պայմանաւ»։

Ձայնը պէտք չէ բռնադատել, կ'աւելցնէ յիշեալ հեղինակը, որովհետև այն ատեն դայն կը խզդեն։ Ճիգը զայն նուազ պայծառ կրնէ և մութ կ'երևի, շշուկ մը կը դայանայ որ զայն նշանակող յունական բառը «եղեր- դեմ- անբարոյական ուղղութիւն» կը յիշեցնէ։

Հրապարակախօսը ձայնի աստիճանները և զօրութիւնները փոփոխել, արտայայտած զգացումներուն հետ անոր փոփոխակի շեշտեր տալ և մանաւանդ միակերպութենէ զդուշանալ պարտի, որ ոչ միայն ունկնդիրներու համար տաժանելի է, այլ և ձայնի սպառում կը պատճառէ։

Ձայնառուցեալներու դիրքը։ — Երգիչները և հրապարակախօսները իրենց դաշնակաւորութիւնները խաչաձևերանդային ձայներուն համաձայնեցնելու վարժուելու են։ Արուեստագէտները խել մը ձայնանիշեր, մանաւանդ սուր ձայնանիշեր հանելու ժամանակ բերանին ծռելու կամ ծռմռկելու չեն։

Ատոնք մեքենական հնարքներ են որ ձայնի հնչեղութեանը համար խորշերուն յարմար ձև մը տալու և քմայ պատրաստին, լեզուին և շրթներուն փոքր մեկ յատի կողմութիւնը դտմանելու համար վարպետները ընդհանրապէս իրենց տշակիրտներուն կը սովորեցնեն։

(Շարունակելի) ՏՕՐԳՈՆ ԳԱՆԳՈՆԱՆ

ԳՐԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

Ժիւլ Սիմոն — Եթէ կայ եւրոպական մատենագիր մ՚որ վաղուց ծանօթ, ստէպ յիշուած և իր իմաստասիրական տեսութիւններն իրրև անժխտելի ճշմարտութիւններ արտագրուած են մեր գրական և օրագրական արտադրութեանց մէջ՝ այս է Ժիւլ Սիմոն։ Ուստի կ՚արժէ հելլէնական թերթ մը մի քանի կենսագրական ծանօթութիւններ քաղելով, հաղորդել այս պատկառելի և իմաստուն ծերունւոյն վրայ՝ որ վերջերս իր արդիւնաբեր կեանքը կնքեց։ Եթէ ոչ աչխարհ, Ֆրանսա արդարև կորսուցաւ հին դպրոցի ներկայիչ մը, դպրոց մ՚ուր Քուզէն և Կիզո կ՚ապրէին, և ուր ընտրական իմաստասիրութիւնը (eclectisme) մարդկային մտածման բանալին կը նկատուէր, թէև հակառութիւններով զեղուն։ Այդ իմաստասիրութիւնն հանրացնելու համար Ժ. Սիմոն զանազան դպրոցական գործեր յօրինեց, որ այսօր երեսէ ընկած են։ Իր լրջագոյն ուսումնասիրութիւններն են Պլոկլուսի վրայ, Պլատոնի և Արիստոտելի աստուածագիտութեան վրայ։ Իր Ալէքսանդրիոյ Դպրոցն Պարմենիդեանն գիտական և յարգի երկասիրութիւն մ՚է, թէև Պ. Վաչրոի գործին չափ արժէք չունի։ Ժամանակին մեծ հռչակ ստացան իր մի քանի երկերն, ինչպէս Պարտաւորութիւնն, Գործաւորուհին, Բնական կրօնն, Խղճի ազատութիւնն, վասն զի այս տեսակ խնդիրներու վրայ հետզհետէ նորերս հրատարակուած գործեր ստուեր բերին Ժ. Սիմոնի համբաւին։ Սակայն ոչ այնքան իրրև իմաստասէր որքան իրրև քաղաքագէտ, ատենաբան, հրապարակագիր, և մանաւանդ իրրև փայլուն և սրամիտ խօսող իր անունն միշտ պիտի յիշուի։ Երբ ծերակոյտին բեմն ելնէր իր ալէզարդ գլխով և ազնիւ դէմքով ամեն մարդ ուշադիր մտիկ կընէր իր լուրջ, անկեղծ և սիրալիր խօսքերն, վասն զի քաջ խօսելու արհեստին մէջ մեծ տաղանդ ունէր, և ամենէ աննշան խնդիրներու յատուկ հրապոյր մը տալ գիտէր։

Բարիզի հին երեսփոխան՝ Ժ. Սիմոն Հնգէց մին էր որ երկրորդ կայսրութեան խախուտ շէնքին առաջին՝ հարուածները տուին։ Սեպտեմբերի 4ին յեղաշրջումէն ետք՝ Ժ. Սիմոն ցաւագին պատիւն ունեցաւ իր փլածը վերականգնելու՝ թէև հանրավարական դրոշին ներքև։ Իրրև անդամ պաշտպան կառա-

վարութեան հանդիսատես եղաւ այն դժբաղդութեանց որոց առաջը չկրցաւ առնուլ, և վշտահար սրտով զորձակից զբաղուեցաւ այն սխալանաց զորս չկրցաւ արգիլել։ Ագեսայի բաղդի բերմամբ Ժ. Սիմոն պաշտպանութեան պատրանքն ու պարտութեան վիշտերը կրեց Ֆրանքո-զերմանական կռուին մէջ։ Երբ պատերազմին վախճանը հասաւ՝ Կամպէդայի արիաբար դիմադրեց խաղաղութեան բանակցութեանց խնդրոյ մասին, և ինքն անձամբ Պորտո գնաց որպէս զի ազգային պաշտպանութիւնը քաղաքային պատերազմով աւարտելու վտանգին առաջն առնուի։

Այս նախորդ պարագաներն Ժ. Սիմոնի մտքին վրայ մեծամաղնիկ տպաւորութիւն մը թողած լինելով, ժողովրդային յեղաշրջումներէ կ'սոսկար և իր վերջին տարիներուն մէջ աւելի պաշտպանողական դիրք մը պահեց։ Մեծ ժողովրդականութիւն ստացաւ նա երբ Պ. Տիւֆորի հրաժարմամբ՝ խորհրդարանական շարժման մը գլուխն անցնելով՝ հանրապետութիւնը նոր շուրջի մը մէջ մտցուց՝ ինք միշտ չափաւոր հանրավարական մը մնալով։

Ժ. Սիմոնն էր որ Ֆրանսան ներկայացուց Ուիլհելմ Բ. կայսեր դումարած եւրոպական համաժողովին մէջ՝ ուր ընկերային խնդիրներ վիճաբանութեան առարկայ եղան։

Թէև ծագմամբ Պրոգոն, այլ սրտովին Բարիզցի, բնաւ չէր հեռանար այն մեծ քաղքէն ուր իր ասպարէզն յարգարեր և անթիւ բարեկամներ շահեր էր։ Որքան որ Ժ. Սիմոն բարոյը դիրք ստացած էր թէ քաղաքական և թէ ընկերական շրջաններու մէջ՝ բայց միշտ պարզութիւնը կ'սիրէր և բնաւ հարստութեան աչք չունէր։ Բարիզ՝ որ պահ մը գինք մոռցեր էր, ինչպէս որ մերթ կ'մոռնայ անոնք որ չեն երևիր ամենուն պտնուած տեղն, պիտի յիշէ անշուշտ որ այդ ուխտաւորամենի ծերունազարդ որդին իր համեստ այլ նշանաւոր փառաց մը պակն է։

ԱՊՐՍԱՄ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ

Մեր եկեղեցւոյ բարեկարգութեան խնդրոյն վրայ վերջերս շատ գրուիլ սկսած է։ Արդարև ամենակարևոր հարց մ'է այն որու վրայ կ'արժէ միշտ մեղրադաղառնալ։ Որպէս զի խնդրոյն ամէն մասերը լուսաբանուին և ուսումնասիրութեան առարկայ ըլլան, պէտք է ձեռնհաս, իրագեկ ու հետաքրքիր ազգայինք ամէն կողմէ իրենց թուիքը հաղորդեն ընդհանրութեան օրագրաց միջոցաւ, թէև քաջ գիտենք, միւս կողմէ, թէ ազգային հոգևոր գլուխները և պաշտօնական մարմիններ այսպիսի խնդրոյ մը վրայ ուշադրութիւն դարձնելու ժամանակ չունին, աչքան պարագաները աննպաստ են։

Եկեղեցական բարեկարգութեանց հարցը ուսումնասիրել ուզող հետևեալ տեսակէտները պարտի աչքի առաջ ունենալ. Ա. արդարև բարեկարգութեանց պէտք ունի՞ եկեղեցին. Բ. այդ բարեկարգութիւնները ի՞նչ հիմանց կամ սկզբանց վրայ հարկ է կատարել. Գ. ո՞րն է այն մարմինը որ հեղինակութիւն կրնայ ունենալ այդպիսի կարևոր խնդիր մը կարգադրելու։

Առաջին կէտին վրայ ընդհանրապէս գրուած են ցարդ այլ և այլ տեսութիւններ և չտեսնուեցաւ մէկը որ բարեկարգութեանց պէտքը չզգար։ Արդէն մեր եկեղեցւոյն արդի վիճակը այնքան հեռացեր է իր նախնի ուղղութենէն, միւս կողմէ՝ մեր ներկայ պահանջմանց այնքան անհամապատասխան ձև մը ստացեր է որ բարեփոխութեան մը հարկը անոր տեսողութեան ու գոյութեան գրաւականը պիտի ըլլար։ Ուստի, ըստ մեզ, այդ առաջին կէտը անվիճելի նկատուելուն, փափաքելի է որ այս խնդրով հետաքրքրուողները իրենց տեսութիւնները պարզեն միւս կէտերուն նկատմամբ։ Մենք թէև այսպիսի կենսական ու լուրջ խնդրոյ մը վրայ տեսութիւն ընելու ձեռնհասութենէն հեռու, մանաւանդ թէ տա՛ս այս հարկ եղած մարդի անդորրութենէն ալ զուրկ ա՛ռ այժմ, յետ երկար խորհրդածութեանց ու խորհրդա՛ցութեանց սա եզրակացութեան հասած ենք թէ կատարելապէս համամիտ ենք անոնց, որոնք մինչև ցարդ գործադրուածէն տարբեր և աւելի ազատամիտ ոգւով պատրաստուած ամենական սահմանադրութեան մը պէտքը կը զգաչնեն, կուսակրան ու այրիացեալ քահանայից ու երեցուհեաց անձնաղոհութեան ուխտը անբանաւոր, անիրաւ, կեղծ, հիան տարար ինաստակար գտնելով հիմնական զարմանի մը հարկը կը բացատրեն, եկեղեցական նորամուտ, անպէտ, մերթ անհեղեղ ծէսերու և արարողութեանց բարեփոխութիւնը կը ջատագովեն, եկեղեցական երգեցողութիւնը աւելի պարզ, վայելուչ, ոգևորիչ ձևի մը վերածելու, ժամասացութիւնները կարճեցնելու և մարգարէութիւններէն ոսկեայ ընթերցումները տակաւ աշխարհի լեզուի դարձնելու, վերջապէս ատենացոյցներուն և օրացոյցներուն բնաբ, զորս սատար, անծանօթ ու խժայուր սուրը և սրբուհի բժիշկներու, ներբինիներու, զինուորներու, սպասաւորներու, ազգատներու և միւսնա կետցներու, և այլն անուններ ծանրացուցած են՝ թեթևցնելու հարկը անհրաժեշտ կը համարին։

Իսկ մեր կողմէ իրաւացի դիտողութիւն մը ըրած կը համարինք, եթէ առաջարկենք որ մեր եկեղեցեաց մէջ հետևեալ մտքերն դարձին

այսու հետև։ Աղաղակն մեջեն «Օրհնեսցի, պահեսցի, նախախնամեալ պահեսցի արևմտեան կողմն աշխարհի և թագաւորութիւն քրիստոնէից, և այլն»։ Պատարագին վերջաբանն եղող հոգեբուղխ ոչ սովոր է, որ սովոր է մաղթանքն «թագաւորաց քրիստոնէից և այլն։» Հանգամանան ժամերգութեան �ոյ տէր Աղոթքն «Տէր Աստուած մեր, օգնեա՝ թագաւորացն քրիստոնէից և իշխանացն բարեպաշտից, և այլն։» Աղաղակ՝ քարոզին մեջեն նոյնպէս քրիստոսասէր թագաւորաց, և այլոց վերաբերեալ երկու հատուածներն։

Դարեր առաջ մեր բարեպաշտ նախնիք քրիստոնէական սուրբ սիրով և ճշմարիտ եղբայրութեամբն պարարք համարած են ազատելու, ինչպէս քրիստոնեայ եկեղեցւոյ լրութեան, նոյնպէս անոր մասերն եղող այլ և այլ եկեղեցիներուն համար, սակայն որոշեցեալ այդ Աստուծոյ ճշմարիտ բարեպաշտները և անոր երկնային ոգին չառաջնորդեր անոնց, որոնք աշխարհասէր, նիւթապաշտ ու գրական իմաստասէրներու կ՚աշակերտին, եկեղեցին պարտաւոր չէ ազատելու անոնց համար այլևս, ինչպէս չազատեր Զինասան ու Շարանի համար։

Երև։, 4 Մարտ 1896 ԳԻՏՈՒ

ՏԱՐՎԻՆԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ *

Բ

ԿԵՆԱՑ ՊԱՅՔԱՐԸ

Տարվինի գրութեան հիմնական գաղափարն է՝ կենաց համար պայքարը։ Անդուլ պայքար մ՚է արդարև զոր իրարու դէմ կ՚մղեն բոլոր կենդանիները կենաց պահպանութեան համար։ Կռիւն ոչ միայն էակ էակի դէմ է այլ արտաքին բնութեան դէմ։

1։ — Արտաքին ազդեցութեանց դէմ մղուած կռիւն նպատակ ունի նախ կլիմա, երկրորդ Ուղեղը։

ա) Կլիմայ.— Պայքարը կլիմայի դէմ թերևս ամենէն տժգանելին է։ Մի քանի երկիրներու մէջ սառնաշունչ ձմեռներու պատճառաւ թռչուններու հինգ վեցերորդ մասը բնաջինջ եղած են։ Լիզանակին խաւութեան դիմացած են անոնք միայն որ կարող եղած են իրենց թռանձր փետուրներու և չարքաշութեան շնորհիւ սովի տակալ։ Արևադարձներու միջև գտնուած աշխարհներն Եւրոպացիք կ՚ջնջուին, եթէ սովորական կենաց ընթացքը շարունակեն։ Յաջողութեամբ մաքառելու համար կը

* Տես, Ա. Մարտ, թիւ 11։

պարտաւորին բնիկներուն սովորութեանց և կենցաղավարութեան հետևիլ։ Կենաց անհրաժեշտ պայման մը կ'պառնայ իրենց համար, ասուի հագուստ հագնիլն և ընդեղէն սննդառութիւնը։ Ընդհակառակ հիւսիսային Թեսեին սառնագին կլիմային ներքև, նաւարկուն պարտաւոր է կետաձկան իւղով սնանիլ՝ իր արեան անհրաժեշտ ջերմութիւնը տալու համար։

Երբ մարդ ուղևորի Հարաւէն Հիւսիս, կ'դիտէ կարգ մը տունկեր, որ հազուագիւտ ուրիշ անթիւ բոյսերու մէջ, անզգայօրէն կ'ճանին մինչև ցրտագին երկիրներն ուր միայն կ'զարգանան ու կ'ամրեն. մինչդեռ միւսներն անհետ եղած են։ Պատճառն այս է որ կլիմայի թեթև տարբերութիւն մը կարող է գերակշռութիւն տալ։ Ի զուր տեսակ մ'ուրիշ տեսակի մը վրայ յաղթանակելու համար և ճոխ բուսականութեամբ կ'յաղթանակէ, եթէ երբեք անզօր է դիմադրել ցուրտին, իր ոստոյը անոր տեղը կ'բռնէ և բոլոր հողին կ'տիրանայ։ Մշտատև ձիւներու և անապատներու սահմաններն՝ բուսահողէ և ջրէ զուրկ՝ պայքարը լոկ արտաքին բնութեան դէմ կ'մղուի։

բ) Ո-ԳԵՈԳ.— Գանի որ անհատներն երկրաչափական յառաջանութեամբ կ'ճանին, ուտելիքն անբաւական կ'գտնեն։ Հարկ է որ շատեր կորնչին. ահա այս ծանր պայմանաւ ցեղ մը կարող է յարատևել։ Ժուժկալութեան ու սովի արիարար դիմացողները միայն կ'ապրին, կամ ուտեստի տիրանալու համար իրենց տարած յաղթութիւնը ֆիզիքական գերազոյն այժի մը կ'պարտաւորին, կամ ազակարգ յատկութեան մը, ինչպէս նենգամտութեան, հնարագիտութեան։ Մեր մեղուն՝ որ նորերը Աւստրալիա փոխադրուեցաւ, շուտով ջնջեց տեղական անխայթ մեղուն։ Մկին՝ որ հիներուն միայն ծանօթ էր, չի իցուիր որ ժամանակ՝ իր հնարեալ իշխանութիւնը մատամբ թոզուց սև մուկին, և հաւանօրէն իսպառ պիտի ջնջուէր եթէ այնքան փոքր չլինէր։ Ըստ կարգի՝ սև մուկն ալ յարձակում դրեց յԱնգլիա՝ 1730 ին և Ֆրանսա 1750 ին, չիկամուկին կողմէն՝ զոր սառուցական նաւեր Հնդկաստանէն և Պարսկաստանէն բերած էին։ Շիկամուկն՝ զրեթէ նոյն մեծութեամբ, այլ աւելի ուժեղ ու վայրագ և մանաւանդ արդասաւոր, դլխավին ջնջեց սև մուկն, որ այժմ կ'գտնուի միայն ագարակներու և հեռաւոր շաղացքներու մէջ։

2.— Անապին կարգի կարևորութիւն ունի արդասաւորութիւնն՝ պայմանների բուն մէջ որ կրնան ներդրծել տեսակ-

ներու մէջ պայքարին արդեանց վրայ։ Այս առաջնակարգ պայմանին մէջ՝ զէտոզ աչքը կարող է ուրիշ շատեր նշմարել, մանաւոր կամ տեղական, տարբեր արդիւնք յառաջ բերող՝ որ ըստ կարգի պատճառներ կ'դառնան։ Ասոնք են գործարանաւոր էակներու փոխադարձ յարաբերութիւնները։

ա) Տեսակէ համար արգասաւորութեան առաւելութիւնը. — Կենաց պայքարին մէջ արդասաւորութիւնն ամենէ ապրեցիկ միջոցներէն մին է ի կորուստ չմատնուելու համար։ Երբ մարդ կ'մտածէ թէ ինչ ահագին քանակութեամբ ծովային ձուկէր կ'սպառէ, օրքան անթիւ ձկեր ծովու աւելի գօրաւոր ձուկերու որս կ'լինին, չպիտի կարենար հասկնալ թէ ինչպէս չջնջուիր այդ ցեղն, եթէ չգիտնար որ կոտորածեն զերծ մնացող մի քանի էգ ձկեր բաւական են ծովը ձկնաւէտելու համար։

Նոյն բանը կարելի ըսել տունկերու համար։ Բանաւոր սպառճառներ կան որ բոյսերը կ'պաշարեն ու կ'ջնջեն — կլիման, միջատներն, կենդանիները, սակայն կ'յաջողին ապրիլ իրենց արդասաւորութեամբ։

բ) Փոխադարձ յարաբերութիւն գործարանաւոր էակներու մէջ — Բնութեան մէջ էակներն իրարու կապուած են կնճռոտ և սաստիկ անակնկալ յարաբերութեամբ։ Ամենէ աննշան դիպուածը կը բաւէ այլազան փոփոխութիւններ յառաջ բերելու համար։ Ահաւասիկ բազմաթիւ զարմանալի օրինակներ։

Յանգլիա՝ Սդաֆբրտ գաւառին մէջ՝ Տարվինի մի ազգականը կալուած մ'ունէր որ ամայի ու խոպան հող մը կ'պարունակէր և զոր մարդու ձեռքը բնաւ չէր հերկած։ Մի անգամ նոյն հողէն հարիւրաւոր արտավար տեղ ցանկապատով կ'գոցուի և սկզբնական թեղջի ծառ կ'տնկուի։ Քառասնհինգ տարիէ ետք՝ զարմանալի հակապատկեր մը կ'երևէր ցանկապատին և ամայի հողին մէջ։ Այս վերջինը բոլորովին միևնոյն վիճակին մէջ կը գտնուէր, մինչդեռ ցանկապատին մէջ տասներկու տեսակ տունկեր կ'ծաղկէին, առանց հաշուելու սիզատեսակներն . . . ։ Միջատներու խումբին մէջ փոփոխութիւնն աւելի զգալի էր, վասն զի վեց տեսակ ճանճեր թռչուններ կայան դրած էին ցանկապատին մէջ և ամայի հողին մէջ չէին բնակեր, ուր միայն երկու երեք տեսակներ որոշ կ'երևէին։ Այսպէս լոկ ծառ մը տնկուելով բուսական այլ և այլ տեսակներ յառաջ եկած էին. բոյսերն ալ բազմաթիւ միջատներ իրենց քաշեր էին, և՝ ըստ կարգի՝ միջատներն ալ այլազան թռչուններ, որոց կեր ու որս կ'լինէին։

Բարակուա ի հիւսիսային ու հարաւային կողմերը կովը, ձին ու շունն ընտելացած են. իսկ նոյն Բարակուայի մէջ չեն։ Պատճառն այս է որ ճանճ մը, որ հատարակ է սոյն երկրին մէջ, իր հաւկիթները նորածին կենդանիներու պորտին մէջ կ'ձգէ և զանոնք կ'ջնջէ։ Եթէ այս ճանճերուն թշնամի միջատներ յաջողէին մեծ մասամբ զանոնք ջարդել, կովերն կրնային այդ երկրին մէջ տարածուիլ ու բազմանալ։ Վայրի արջառի զոյութիւնը պիտի այլափոխէր բուսականութիւնն, և՝ ըստ կարգի՝ միջատներուն ալ կեանքն. ուստիւ պիտի ծագէին գիրար զուգաւորող շրջանաւոր նորոգութիւններ՝ նաւերուն ձգած ակոսին պէս։

Շատ տունկեր չեն կրնար արգասաւորիլ և հետևապէս արտաբերել եթէ կարգ մը միջատներ անոնց վրայ չդադարին։ Այսպէս՝ թիթեռնիկներու այցելութիւնը կարևոր է. մի քանի շանձաւքի իրենց բեղնավորին շարժելու և արգասաւորելու համար։ Հոլանտական տաւուղան մեղուներու մերձաւորութենէ պէտք ունի, այն բոռներն որ սոյն միջատներուն անհպելի են՝ անուշ կ'մնան։ Բոռերը միայն կարմիր տաւուղը կ'այցելեն. միւս մեղուները չեն կարող հասնիլ անոր տիրին, իսկ թիթեռնիկներն այնքան ծանր չեն որ կարենան կոտրել պսակին թերթիկները։ Ասկից կ'հետևի՝ որ եթէ երկրի մը մէջ բոռերը ջնջուէին, կարմիր տաւուղը վերջապէս պիտի անհետ լինէր։ Արդ՝ բոռերու թիւը շատ կախումն ունի ցիկամիներուն թիւէն որ կ'աւերեն անոնց մեղրախորիսխներն ու բոյները։ Դարձեալ ցիկամիներու թիւն կախումն ունի կատուներու թիւէն։ Գիւղատնտ է որ ատատ կատուներ պտուտատ գիւղերու մէջ՝ մեծ քանակութեամբ կ'տեսնուին բոռերու բոյներ։ Հետևապէս կատուանման կենդանիի մը ներկայութիւնն երկրի մը մէջ, նոյն տեղւոյն մէկ տունկին նուազութեան կամ առատութեան պատճառ կրնայ լինիլ։

3. — Եզրակացութիւն. — Իր ամբողջութեան մէջ նկատուելով՝ երկիրն ճակատամարտի ընդարձակ դաշտի մը կ'նմանի՝ որ անհատներն ու տեսակներն անդուլ պայքար մը կ'մղեն տարբեր միջոցներով, թէև պարերու երկար շարքին մէջ այժերու հաւասարակշռութիւնն ընդհատուած չմնար։ Տիեզերական շահամրցութիւն, այս է ահա կենդանի բնութեան մեծ օրէնքը։ Եւ սակայն՝ հազիւ թէ այսօր մարդուս իմացականութիւնն ու գիտութիւնն կարող եղած են այս անապին ցանցին մի քանի կապերն ներևան հանել։ Ցորվին պերճ ու աղնիւ ոճով

կ'բացատրէ այս նկատումները։ «Միայնակ – Նահանգաց հընդկային հին աւերակները, որ երբեմն ծառերէ զուրկ եղած պիտի լինէին, այսօր մի և նոյն այլազանութիւնն և մի և նոյն համեմատական նիւթերը կ'պարզեն մեր աչքին ինչ որ ներկայեն չրջակայ անկախ անտառները։ Ի՞նչ պայքար մղած պիտի լինին արդեօք երկար դարերու ընթացքին մէջ՝ այդ այլազան ծառերը, որոց իւրաքանչիւրն ամեն տարի իր բիւրաւոր հունտերն հեռաւները կ'սփռէ։ Ի՞նչ պատերազմ միջատ միջատի դէմ, ինչպէս նաև միջատներու, խոշունջներու և ուրիշ կենդանիներու կոիւն թռչուններու և դիշակեր անասուններու դէմ, ամենքը բաղմանալու ճգնելով, և ամենքը դիրար կեր ընելով, կամ ծառերու, հունտերու, նորաբոյս ծիլերու կամ ուրիշ տունկերու չնորհիւ ապրելով, որ ի սկզբան երկիրը կ'ծածկէին և հեռաւոյս ծառերու ամուսմը կ'արգիլէին։ Ամ մը փետուր օդին մէջ ցրուէ, և որոշեալ օրինաց համեմատ՝ մէն մին երկրիս վրայ պիտի ընկնի, բայց որքան պարզ է այդ անկման խնդրոյն լուծումն բաղդատմամբ անթիւ տունկերու և կենդանիներու ներգործութեան և հակազործութեան խնդրոյն հետ, որ դարերու ընթացքին մէջ յառաջ բերին ծառերու տեսակներն և համեմատական թիւերն, ծառեր՝ որ այժմ կ'ամբին հնդկային վղատակներուն վրայ։

Ճակատամարտ ճակատամարտի վրայ անդադար կ'մղուին յաջողութեան տարբեր արդիւնքով, և սակայն այժերու հաւասարակշիռն այնչափ կատարելապէս կ'հաստատուի ժամանակներու ընթացքին մէջ, որ թնութեան տեսքն անփոփոխ կ'մնայ երկար չրջաններու մէջ, թէև չնչին պարագայ մը կ'բաւէ սակայն գործարանաւոր այսինչ էակին քան միւսին յաղթութիւնը տալու։ Սակայն մեր տգիտութիւնն այնքան խորին է և մեր մեծամտութիւնն այնքան սնարատաւան որ կ'զմայլինք տեսակի մը ջնջումն իմանալով, և որովհետև այդ ջնջման պատճառը չենք տեսներ, ջրհեղեղներ օգնութեան կ'կոչենք աշխարհս աւերելու համար, կամ կենսական ձևերու տեղութեան վրայ օրէնքներ կ'հնարենք։

(Հարուստակիլ) Ս.

ՄՈՎՍԷՍ ԵՒ ԿԱՐՄԻՐ ՆԵՂՈՍԸ

Ելից (Գլ. Է. 19–25) գրքին մէջ կ'պատմուի թէ ի՞նչպէս Մովսէս Նեղոսի ջրերն արեան փոխեց։ Աստուծոյ հրամանաւ Մովսէս իր գաւազանն երկնցուց ջրերուն վրայ և Փարաւոնին առջև Նեղոսը հարուածեց — և զետին բոլոր ջրերն արիւն դարձուց։ Անոր մէջ գտնուած ձկունքը սատկեցան, և զետը նեխեցաւ և Եգիպտացիք չէին կարող զետին ջրէն խմել։ — Այս հրաշքն ազդեց բոլոր ջրանցներուն, լճակներուն, ջրամբարներուն, ընդունարաններուն։ Այս պատմութեան մէջ հարկ է անցողակի ըսել որ հարուածին նկարագիրը ցոյց կ'տայ թէ պատմարանը քաջ տեղեակ էր Եգիպտոսի տեղագրութեան և անոր ժողովրդեան ընտանեկան կենաց։ Բայց սոյն յօդուածիս նպատակն է պատուհասին գործողութիւնը բացատրել, ջրերուն արեան փոխուիլը մեկնել։ Միթէ այսօր Նեղոսի մէջ այդպիսի երևոյթ մը կա՞յ։ Այսինքն՝ Նեղոսն այդպիսի հրաշք մը յառաջ բերելու բնական պայման մ'ունի՞։ Նախ պարտ է յիշել Օգիլբրնի «Եգիպտոսի յիշատարանական պատմութենէ» վկայութիւն մ'որ կրնայ խնդիրը բացատրել։ — «Արևը, կ'ըսէ Պ. Օգիլբրն, արարական բլուրներուն վրայ էր, երբ զարմացմամբ տեսայ որ՝ իր ճառագայթները ջրերուն զարնելով՝ մութ կարմիր ցոլացում մը պատճառեց։ Այսին ամամբ կարմիր գոյնն սկսաւ սաստկանալ, այնպէս որ արևուն սկաւառակը դեռևս բլուրներէ վեր չբարձրացած՝ Նեղոսն արեան գետի մը տեսքն առաւ։ Կարծելով թէ առ աչօք տեսիլ մ'է այս, շուտ մը ոտք ելայ և նաւակին եզրին վրայ յենելով՝ նորէն դիտեցի և իմ առաջին տպաւորութիւնս հաստատեցի։ Ջրերուն համակ կոյսն դիմահար և մութ կարմիր էր, աւելի արեան քան ուրիշ ո և է բանի նման։ Նոյն միջոցին դիտեցի նաև որ զետը մի քանի բթամատ՝ գիշերն՝ բարձրացեր էր, և Արաբացիք եկան ինձ ըսելու թէ այս կարմիր Նեղոսն էր։

Նեղոսի այս սովորական երևոյթն չեմ գործածեր իբրև բացատրութիւն մը պատուհասին, վասն զի Կարմիր Նեղոսը, թէև արեան տեսքն ունի, այլ զուրկ է հրաշքին միւս մահաբեր ներգործութենէ։ Ընդ հակառակն՝ կ'ըսեն թէ Կարմիր Նեղոսին ջրերն շատ զմայլելի ու զովարար են, բայց այդ այլասփոխու-

թիւնը կրնայ մեզ առաջնորդել ցոյց տալու համար այս բնական երևոյթին աշխարհագրական յարաբերութիւնն հրաշալի պատուհասին հետ։ Վասն զի չառագունով նիւթն որ այս փոփոխութեան մէջ կ'գտնուի և որ կրնայ առողջասուն լինիլ երբ չափաւոր քանակութիւն մ'ունի, աղէտալի հետևանք մը կ'ըստանայ երբ ժանտախտ բերելու չափ կ'աւելնայ։ Արդ՝ կ'մնայ որոշել թէ իրօք այս հասարակ երևոյթին մէջ մինթէ կ'գտնուի ինչ որ կ'անուանեն տրիւնային նիւթ մը, և մինթէ կարելի՞ է ապացուցուիլ որ հրաշքին մէջ տեսնուածին պէս մահաբեր ներգործութիւն մը կ'ունենայ։ Էնրէնպէրգի բնապատումն Նեղոսի այդ արենագոյն տեսքին պատճառը քննեց և ցոյց տուաւ թէ այդ գոյնն առաջ կ'գայ չէ թէ սիկէ, ինչպէս երկար ժամանակ կարծեր էին, այլ կարմրագոյն ջրաճիներէ և գաղտնածին մանր բոյսերէ։ Անդամ մ'որ այս իրողութիւնը գիտենք, կարող ենք նաև հրաշքին գործողութիւնը տեսնել . . . թէև ոչ իր ծագման զօրութիւնը։ Վասն զի այս բոյսերէն մին լոռն է, և լոռն՝ ինքնին այնքան մանր (քառակուսի բթամատի մը մէջ 46,656,000,000,000 էն մինչև 834,736,000,000,000 բոյս կ'գտնուին) ընդունակ է հիանալի արտաբերութեան։ Այնքան շուտ կ'ածի այդ բոյսն որ իրօք կ'հոսի։ Կարմիր Ծովուն ամբողջ խորքն 1823 ին իր ներկայութեամբն արեան գոյն մ'առաւ և այնպէս կ'թուէր թէ նոյն պատճառաւ Ելպա գետն արեան հոսանք մը դարձած էր ներկայ դարուս սկիզբը։ Ուստի երևակայէ այդ լոռն, երկնային զօրութեամբ այնքան առատացած՝ որ ոչ միայն գունաւորէ այլ և դրաւէ ջուրն, արեան թանձրութեան վերածէ սոսկալի արտաբերութեամբ, և այն ժամանակ ահա ժանտախտն կամ հարուածն երևան կ'ելնէ։

Այս իրողութեան իրրև ապացոյց՝ Կէյքի կ'ըսէ թէ՝ հարաւային Ամերիկա կ'գտնուի քարայրի մը մէջ աղբիւր մը ուսկից արիւն կ'վազի։ այդ հեղուկն հոսելով կ'պնդանար և երբ չիչերու մէջ դրուէր անոնց մէջ կ'ուռէր և կ'պայթեր։ Շուներ զայն կ'ուտէին անյապօրէն։ Մովսէսի հրաշքն բաւական էր որ պընդացնէր ահեցնելով այդ լոռերն այն աստիճան որ պատուհասի մը կերպարանն առնէին։ Վասն զի յայտնի է թէ Նեղոսի ջրերը ոչ միայն մի և նոյն տեսքն տուած են, այլ և արեան նման հեղուկ մը դարձած և ամիսներ ժահահոտ բուրումներ արձակած են։ Այսպէս հարկ չկայ բուսական իմաստով մեկնելու զինքը, մեկնութիւն՝ որ դրեթէ անհաւատալի կ'դարձէ հա-

բուածը, վասն զի այնչափ ապականեալ արեան գարշահոտ հոսումները բոլոր Եգիպտոսը թունաւորելու բնութիւնը պիտի ունենային։ Թէ գետին ջուրը բուն արիւն չէր այս իրողութենէ ևս կ'հետևի որ Եգիպտացիք անոր ջուրջը փորելով բաւական ջուր կ'հանէին, ապա թէ ոչ ծարաւէ պիտի մեռնէին. վասն զի եթէ ջուրն իրօք արեան փոխուած լինէր աւազին մէջէն թորելով իսկ ըմպելի չպիտի լինէր։ Այս առարկութիւնը թէև բանաւոր՝ չկրնար ջրել այն իրողութիւնը թէ Նեղոսի ջրային լուերէն կրնայ ժանտախտ յառաջ գալ։

Ֆ.

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՅՐԵՆԻՔ

Ամերիկեան թերթ մը այս վերնագրով մի յօդուածի մէջ իրաւամբ կ'նշաւակէ այն ժողովուրդներն որ՝ յանուն քաղաքակրթութեան՝ կոչտ այլ հանդարտ ու խաղաղասէր ազգերու կեանքը կ'վրդովեն և անոնց հետ հրով ու սրով կ'խօսին։ Այնպէս կ'թուի՝ արդարև՝ որ ներկայ դարուս մէջ անկիրթ ազգ մը առանց արտաքին երկրակալներու միջամտութեան, կարող է իր ճակատագիրը կազմել։ Հապէշստանի Մէնէլիք թագաւորն բոկոտն մարդիկներու հետ պատերազմ մղեց և Իտալիոյ քաջավարժ զինուորներուն յաղթեց։ Ոչ միայն իր հին պետութիւնը պահպանելու հնարագիտութիւնն ունեցաւ, այլ և ցոյց տուաւ թէ՝ արիութեան հետ գիտէ կատարել պատուոյ և վեհանձնութեան գործեր։

Նոր երկիր մը փաղփաղելու սովորական եղանակը կ'նշանակէ միայն իր բնիկներու արագ կամ յամր ջնջումն։ Մեզ կըսեն թէ ոսոխն է ցեղ մը, վասն զի արդի քաղաքակրթութեան ջերնոցին մէջ կ'մեռնի։ Բարեսիրտ վերանորոգիչն անքաղաքակիրթ մարդը կ'առնու, կ'հագուեցնէ, անոր թարմ հաց և գինի կ'մատրէ։ Կարգալ կ'սորվեցնէ և կ'ջանայ զարերու զիտութիւնն անոր գլխին մէջ թափել։ Երբ նա այդ բաները չէ կարող ընդունիլ, երբ ընդունելով կ'վհատի ու կ'ոսնի, վերանորոգիչը կըսէ. ոսոխն կարգի էակ մ է, ուստի լաւագոյն է որ մեր ճամբուն վրայ արգելք չդնէ։ — Եւ ապա համակրական հառաչով

մը վայրենիին որսական հողերը կ'գրաւէ կ'ծախէ կամ կ'չահագործէ։

Հապէշներն, բաց ի լորտ Նարիէրի պատժական արշաւանքին առթիւ ի Մակտալա, երբէք չեն յաղթուած, և հաւանական է, անշնաս ժողովուրդ մը լինելով, ապագային մէջ նորէն յարձակում չպիտի կրեն։ Արդէն մարտական նոր եղանակին վարժած են և հետաքրքրական է տեսնել թէ ինչ ուղղութիւն պիտի բռնեն իրենց վիճակը բարւոքելու համար։

Արդէն Ճաբոն մեզ ցոյց տուաւ թէ՝ թերակղզի ազգ մ'ինչեր կարող է ընել մի քանի տարուան մէջ, քանի քանի ժողովուրդներ նոյն ընթացքն պիտի բռնէին եթէ նպաստաւոր պայմաններու մէջ գտնուէին։ Որքան վայրենական նոյնքան բուռն քաղաքակրթութեան միջոցներն արդեաք կ'լինին յաւաղջիմութեան։

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1895 – 1896

Կան մեր մէջ կարգ մ'ընկերութիւններ՝ որ փայլուն նպատակներ կ'ընտրեն, խոշոր ծրագիրներ կ'յօրինեն, մեծ մեծ բաներ կ'խոստանան փողերով՝ և ապա անգործութեան կամ ճոռոմաբանութեան մէջ կ'քայքային, առանց գործնական ոգի և արդիւնք մը ցոյց տալու։ Պատճառն այս է որ առանց իրենց ոյժն ու միջոցները կշռելու ճամբայ կ'ելնեն և յոյսերու վրայ կ'հիմնեն իրենց բոլոր ձեռնարկներն, և բնական չեն յաջողիր։ Այս յաւակնութիւնն ու պատրանքն ունեցած չէ Քաղքիս Ո-սուսական Ընկերութիւնն՝ որ իրեն որոշ նպատակ մ'ընտրած է և համեստ սահմանի մը մէջ կ'գործէ՝ գրեթէ տասն տարիէ ի վեր առանց աղմուկ հանելու, առանց գովեստներ մուրալու։ Տարուէ տարի իր տեղեկագիրը կ'հրատարակէ և եթէ իր ձեռնարկներն այնքան մեծ փայլ չունին ղէթ օգտակար են և ուսումնասիրական շարժումներու ձեռնտու։

Այս օրերս լոյս տեսաւ նաև իր 1895 – 1896 շրջանի Տեղեկագիրն հաւուեցոյցին հետ, որմէ կ'տեսնուի թէ Ընկերութեան մի կարևոր գործն եղած է երկու վարժուհիներու առաքումն

ի Մոնրէլիէ, գործ՝ որու վրայ ժամանակին գրուած է սոյն հանդիսիս մէջ և որու յաջողութեան աջակից դանուած է Հայ Հասարակութիւնն իր նուիրատուութեամբ։ Յուսալի է որ Օրդ. Թադուհի Երկանեան և Վարվառէ Մկրտիչեան իրենց ջանասիրութեամբ պիտի յաջողին որոշեալ ժամանակին իրենց վիպայագիրն առնլով ժողովրդեան ակնկալութիւնները պատկել։

Ընկերութեան մուտքն եղած է 22,303 դր. 16,551 դրը բաժանորդագիններէ գոյացած։ Ամբողջ մնից գրեթէ կէսն ծախք եղած և մնացածն տոկոսի ու պահեստի դրուած է։

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՈԳ.-ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1895 ԱՊՐԻԼ 1 — 1896 ՄԱՐՏ 31

Ոչ նուազ զովելի և եռանդուն ժրութեամբ կ'աշխատի Պատ. Հոգատար – Որբախնամ Ընկերութիւնն իր խնամոց յանձնուած Որբանոցն մատակարարել և որբերուն նիւթական, բարոյական և մտաւոր պիտոյից համար ամեն ջանք ի գործ դնել։ Հայ Հասարակութիւնն՝ առ Որբանոցն ունեցած համակրական տրամադրութիւնները ցոյց կուտայ անընդհատ իր նուէրներովն ու դրամական աջակցութեամբն, և եթէ կայ բան մ'որ կը պակսի այդ բարեգործական հաստատութեան այս է՝ հաստատ չէնք մ'ուր կարենան որբերն պատսպարուիլ վարձակալութեան ծանր բեռէն և տեղափոխութեան դժուարութիւններէ ազատ։ Անտարակոյս՝ Հասարակութիւնն, եթէ ոչ մասնաւոր բարերարմը, պիտի նկատողութեան առնուն վերջապէս Որբանոցի յարմար, օդաւէտ և հանգստաւէտ չինութեան մը պէտքն, և հարկ եղած միջոցներն ի գործ պիտի դնեն Որբանոցի յարատև և մնայուն դիրք մը տալու։

Պատ. Հոգատար – Որբախնամ Ընկերութեան Տեղեկագրի բաժանորդագրութեան և նուիրատուութեան ընդարձակ ցանկերն ցոյց կ'տան թէ ժողովուրդն լրբև իրեն յատուկ տունը կ'նկատէ այդ հիմնարկութիւնն և շատեր որբերու ուտելեաց, հագուստի և այլազան պիտոյից հոգը կը տանին առատասրտութեամբ։

Հաշուեկշռէն կ'երևի որ Հոգ. Որբ. Ընկերութիւնը՝ նախորդ շրջանին՝ 66267 դրչ. մատան ունեցած է բաժնեգիններէ նուի-

բատութիւններէ եւ 30 հազար դրչի. մեր ծախք, այնպէս որ՝ թէև իր նիւթական վիճակն անձուկ չէ, սակայն իր մեծ աղբիւրները պարտին առատանալ որպէս զի նորանոր պիտոյից դէմ առնու և իր գործողութեան չրջանն ընդարձակէ։

Համբերութեամբ, կանոնաւորութեամբ և արդիւնաւոր աշխատութեամբ Պատ. Հոգատար – Որբախնամ Ընկերութիւն անշուշտ իր նպատակին պիտի հասնի։

ՀԱՅՐԵՆԻՔ ԵՒ ՄԱՍԻՍ

Արդէն մեր օրագրական և պարբերական թերթերն ղեժրաղդ ապէս ցանցառ, աւելի ևս նուազեր և կերպ մը դատարկութեան առիթ տուեր էին Հայրենիքի և Մասիսի դադարմամբ։ Այս օրերս թէ մին և թէ միւսն սկսան հրատարակուիլ և այս ուրախառիթ երևոյթ մ'է։ Հայրենիքի Տէր և Տնօրէն Յովհաննէս էֆ. Շահնազար կը վերակոչի նախարանով կ'բացատրէ դադարման պատճառն, դադարում՝ որ 163 օր տևած է, և բաժանորդներուն միտքն անդորրելու համար կ'յայտարարէ ըրած կարգադրութիւնները։ Տարակոյս չկայ որ Հայրենիքի՝ գործունի և բանիրուն Տնօրէնին հսկողութեան ներքև, պիտի ջանայ հայոց բարոյական և մտաւորական անմիջական պիտոյից գոհացման աջակից գտնուիլ։ Ուստի Հայրենիքի յաջողութիւն և յարատևութիւն կ'մաղթենք։

Իսկ Մասիսի * Խմբագրութիւնն այս անգամ ստանձնած է Արմաշու Դպրեվանուց Միաբանութիւնն՝ ամեն շաբաթ հրատարակելու տարամարդութեամբ՝ կրօնական, ազգային, գրական, գիտական և փաստական նիւթերու ծրագրով, չէ թէ իբրև յաջորդ Յոյսին, որ վաղուց մարած է, այլ նորագոյն լոյսերով՝ որոց մէջ կը փայլին յատկապէս Օրմանեան Սրբազանն, Դուրեան վարդապետն՝ բոլորուած նորընծայ արեղաներու համատեղութեամբ, որ անշուշտ իրենց ստացած բարձր դաստիարակութեան և ուսմանց արդասիքն պիտի ջամբեն հայ ժողովրդեան Մասիսի միջոցաւ, և մանաւանդ եկեղեցական բարեկարգութեան և կրօնական դաստուն զարգացման համար լուսաւոր խորհուրդներ և տեսութիւններ պիտի տիրեն։

Մասիսի տարեկան բաժնեգինն է 40 դրուշ. թղթատարութեան ծախք 10 դրուշ. — Բաժանորդագրութիւնք կ'սկսին ամեն տարի 1 ին կամ 15 ին։

(*) Թիւ 2 հասած է միայն Խմբագրութենէն։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՒ

Օրաբար. — Գերման գիտուններ միշտ իրենց գիտութեան սրբավայրէն հետաքրքրական գիւտ մը դուրս կ'հանեն՝ չէ թէ ի սէր մարդկութեան, որու համար ի հարկին բառ մ'անգամ չեն գտներ, այլ ի նշան մեծամտութեան։ Դեռ երէկ իրենց գործանոցէն էր որ Ռօէնդկէնի ճառագայթները գործնական նոր մղում մը տուին լուսանկարութեան, որ երբեմն չէ թէ իրրև գիտական այլ զուարճալի արհեստ մը կ'նկատուէր։ Այս օրերս նոր հմուտ Տեսու մը նոր գրօսանքի մը գիւտը կ'ծանուցանէ՝ արդիւնք երկարատև խուզարկութեանց որ ցարդ մթի-մաղիքական և մեքենագիտական կնճռոտ խնդիր մը կ'երևէր, և առևտրական ու մարտական կարևորութիւն ունեցող գործ մը։ Բրօֆ. Լիլիէնթալ կ'կարծէ թէ մարդկան ակումբներն կը պարտաւորին իրենց այլազան խաղերու ծրագրին աւելցնել նորագոյն միջանք . . . այս է՝ թռչական խաղեր։

Շատ ուշադրաւ է այդ առաջարկն։ Իրաւի՝ Հեր Լիլիէնթալի մեքենական գործին իր արդի վիճակին մէջ՝ գործնական նպատակներու չէ կարող ծառայել, քանի որ ծանր բեռներ չկրնար տանիլ և շատ հեռաւոր տեղեր ուղևորիլ։ Իրաւի չէ կարող երկաթուղիներու, շոգենաւերու տեղը բռնել և ոչ իրրև պատերազմական մեքենայ գործածուիլ, սակայն իրրև զրօսալի գործի, շատ կ'գնահատուի և գերազանց կ'համարուի քան ձիւնամոյկն, հեծելանիւն։ Ցիսուն ոտք բարձր տեղէ մը մեկնելով՝ փորձ թռչողը կրնայ իր թևերը զարնել և շարժել օդին մէջ քանի մը հարիւր ոտք և ապա գետինն իջնել։ Այս օդային շարժումն շատ զմայլելի այլայլութիւն մը կ'պատճառէ։ Մեքենան ծանր չէ, մէն մի ուսէ տասնմէկ ոտք բացող թևեր ունի, և գիւրագին է։ Հետևապէս ոմանք՝ որ նորութեան սիրահար և երկրէն ցանձրացած են, կարող են փորձել այդ օդապար գործին և մարմնով սաւառնիլ օդին մէջ, քան գլորիլ ու սողալ ցամաքի վրայ։

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ՍԿԱՍԷՌՑ

Թշմիրի համար	տարեկան	3 1/2	արծ. ֆէճիր
» » Զէցամանայ		2	» »
Ամբ. վարժարանէրու	»	2 1/2	» »
Կ. Պոլսոյ եւ Փարր Ալիոյ	»	4	» »
» » »		2 1/2	» »
Ազգ. վարժարանէրու	»	3	» »
Փոխատարամի համար	»	8	բուլլի ֆրանկ.
» » »		4	» »
Եւրոպայի »	»	13	ֆրանկ
» » »		9	»

ԿԱՆԽԻՒ ՎԱՅԵԼԻՆ

Ո՛և է նամակ, յօդուած ու գրուած ուղղեալ խմբագրութեանս եւ չեն դարձուիր։

Ամ. Մամուլ կ'հրատարակէ նաեւ ծանուցումներ չափաւոր պարձանէրով։

Հասցէ

Մ. Մամուրեան
խմբ. Տիրոջ Ամ. Մամուլ ի ՍՄԻՐՆԻՆ

M. Mamourian
Rédacteur de la Revue
« Arevelian Mamoul » SMYRNE

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՏԱՐԵՑՈՅՑ

1896

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ

ՆԵՄԱՆ Ա. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Ի ՊՈԼԻՍ

Գանուի Ի Պոլիս Պ'յալիրեան տպարանն, Էյրի Զարպէէ Ճանապարհ, Թիւ 61։

Ձիւանիա – Կեդրանաձիի Մամուրեան տպարանն։

ԳԻՆ 6 ՂՐՈՒՇ

ՏՊԱՐԱՆ-ԳՐԱՏՈՒՆ

Մ. Մամուրեան

Մօտա-Փողոց Թիւ 3 (Ս. Սիրիանոս Եկեղեցւոյ դիմաց)

ՏՊԱՐԱՆՆ կ'ընդունի ամեն տեսակ տպագրական գործերու յանձնարարութիւններ:

Կ'տպէ — Գրքեր, Տեղեկագիրներ, Ցայտարարութիւններ, Մամուլներ, Հաշուեցոյց, Ընկերագիր, Նամակագրութիւն, Տոմսեր, Հարսնեստոս, Մահագր եւ այլն եւ այլն խիստ ազան գիներով:

ԳՐՔԱՏՈՒՆ — կ'ընդունի ամեն տեսակ հրատարակութեանց յանձնարարութիւններ։ Կ'գտնուին՝ ամեն տեսակ գիրք, դասագիրք, վեպ, Հայերեն, Անգլիերեն, Ֆրանսերեն լեզուաւ։ Նոյնպես դպրոցական տետրներ։

Սեպհական դասագրքերու վրայ երբ մեծամասնակ գնումներ լինին կարող է մինչեւ **20** %-է **25** % զեղչ ընել, իսկ գրավաճառներու համար մասնաւոր պայմաններ, երբոր տեղեկութիւնք խնդրուին։

Թղթատան ծախսի գնորդներու վրայ է։

Գրատանս մէջ կ'գտնուին Մեծանուն Աբիկեան եղբայրներ դասագիրքերն, մեծամասնակ գնորդներու մինչեւ **20** % զեղչ առանց ձամբու կամ թղթատան ծախսի։

Ամեն տեսակ եւ ամեն լեզուի հանդիսներու եւ օրագիրներու բաժանորդագրութիւնք կ'ընդունուին առանց յանձնարարողէ՝ի։

Ա. ՄԱՄԼՈՅ բաժանորդագրութիւն փափաքողք կրնան դիմել Տպարան - Գրատուն։ Հինգ բաժանորդ գտնողի 1 տարեկանին ձրի կ'տրուի։

Ա. Մ-ին մէջ ծանուցումներ եւս կ'ընդունուին խիստ ազան գիներով։

Ամեն տեսակ գործատուութեանց համար վնասմունք կանխիկ են, իսկ տանձնարարութեանց համար կանխավճար մ'անհրաժեշտ։

Ամեն տեսակ Հեղինակներն ու Հրատարակիչներն որ կ'փափաքին իրենց գրքերն Ա. Մ-ին մէջ ծանուցուած և գրատան յուշարեղկին մէջ ցուցադրուած տեսնել, պարտին էջ-ի՝ օրինակ մէջ դրկել։

Հասցէ՝

Տպարան - Գրատուն

Մ. Մամուրեան — Իզմիր